

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**



**"Մեղրիի մաքսակետի արդիականացում և
վերակառուցում" նախագծի**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Նոյեմբեր 2019

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**"Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում"
նախագծի**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

ՀՀ ՊԵԿ ԳԿՎ շինարարական ծրագրերի
համակարգման բաժնի պետ

Ն. Մնոյան

" ____ " _____ 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....5

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ5

3. ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ6

4. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ7

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԶԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԿԱՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐԸ8

5.1 Ազգային նորմատիվաիրավական պահանջները.....8

5.2 Միջազգային համաձայնագրերը.....11

6. ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 13

6.1 Նախատեսվող գործունեության տարածքը.....14

6.2 Անցակետի տեխնիկական բնութագիրը.....15

6.3 Անցակետի հիմնական տարրերի նկարագիրը16

6.3.1 Քանդման աշխատանքներ16

6.3.2 Տեղանքի հարդարեցում16

6.3.3 Գլխավոր վարչական շենք.....17

6.3.4 Անասնաբուժական, սանիտարական և ֆիտոսանիտարական ստուգման կետ17

6.3.5 Տրանսպորտային միջոցների մանրակրկիտ ստուգման մասնաշենքեր.....18

6.3.6 Սահմանային անցակետի մուտքի և ելքի հսկման համար տաղավարներ19

6.3.7 Շվաքարանի տակ գտնվող հսկման տաղավարներ19

6.3.8 Տրանսպորտային միջոցների ռենտգենային ճառագայթներով զննման մասնաշենք.....20

6.3.9 Ծառայողական մասնաշենք K-920

6.3.10 Ծանապարհային ցանց, կայանատեղիներ և այլ հարթակներ21

6.3.11 Ենթակառուցվածքները.....22

6.4 Ազդակիր համայնքի մոտեցումը նախատեսվող գործունեության վերաբերյալ26

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ26

7.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը.....26

7.2 Տարածաշրջանի երկրաբանությունը.....28

7.3 Սելսմատեկտոնիկ պայմանները28

7.4 Տարածաշրջանի հողերի նկարագիրը29

7.5 Տարածաշրջանի ջրագրությունը29

7.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները31

7.6.1 Ջերմաստիճանը.....31

7.6.2 Խոնավությունը.....31

7.6.3 Մթնոլորտային տեղումները.....32

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ԾՐԱԿԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

7.6.4	Քամի	32
7.7	Մթնոլորտային օդի որակը	34
7.8	Աղմուկը և թրթռումը	34
7.9	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	34
7.10	Պատմամշակութային հուշարձաններ	36
7.11	Բուսական և կենդանական աշխարհը	36
7.11.1	Բուսական աշխարհը	36
7.11.2	Կենդանական աշխարհը	36
7.11.3	Ազդակիր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պատկերը և ենթակառուցվածքները	41
8.	ՆԱԽԱԳԾԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	43
8.1	Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա նախնական ազդեցության գնահատումը	44
8.1.1	Ճանապարհների ծանրաբեռնվածությունը	44
8.1.2	Մթնոլորտային օդի աղտոտումը	44
8.1.3	Աղմուկի և թրթռման ազդեցությունը	45
8.1.4	Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա	46
8.1.5	Ազդեցություն հողային ռեսուրսների վրա	46
8.1.6	Թափոնների առաջացման հետ պայմանավորված ազդեցությունները	47
8.1.7	Ազդեցությունը կենսաբազմազանության վրա	48
8.1.8	Աշխատանքի անվտանգության ռիսկերը	48
8.2	Համայնքի/տարածաշրջանի վրա նախատեսվող գործունեության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը	49
8.3	Ազդեցությունը հարակից բնակավայրերի, օբյեկտների և ենթակառուցվածքների վրա	50
8.4	Հողօգտագործումը և հողի օտարումը	51
9.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	51
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	55
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	56

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1	Նախագծի անվանումը՝	Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում
1.2	Պատվիրատու՝	ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե
1.3	Ձեռնարկող՝	ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե
1.4	Ձեռնարկողի հասցեն՝	ՀՀ, Երևան, 0015, Մովսես Խորենացու փող., 3 շենք
1.5	Աշխատանքային նախագծի մշակող՝	Euro Consult (Մակեդոնիա) և STEM (Հայաստան) ընկերությունների կոնսորցիում
1.6	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ, Սյունիքի մարզ, Մեղրի բազմաբնակավայրի վարչական տարածք

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միացյալ Ազգերի Կազմակերպություն
ՄԱԶԾ	Միացյալ Ազգերի Կազմակերպության Չարգացման Ծրագիր
ՊԵԿ	Կառավարությանն Առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե
ՓԲԸ	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ	Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՊՈԱԿ	Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանային Թույլատրելի Կոնցենտրացիա
ՇՄՆ	Շրջակա Միջավայրի Նախարարություն
ՀԱԿ	Հսկիչ Անցագրային Կետ
ԱԻՆ	Արտակարգ Իրավիճակների Նախարարություն
ՊՄԿ	Պղնձամոլիբդենային կոմբինատ
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԱՏԳ	Ազատ տնտեսական գոտու

3. ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը էական առաջընթաց է գրանցել միջազգային չափանիշներին և սկզբունքներին համահունչ միգրացիայի և սահմանների համալիր կառավարման համակարգերի հզորացման և կատարելագործման ոլորտում: Այն կենսական նշանակություն ունի տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի տնտեսական, առևտրային և մշակութային կապերի ընդլայնման, ինչպես նաև ճանապարհորդների իրավունքները պաշպանելով՝ նրանց հոսքի արդյունավետ կառավարումն ու վերահսկումն իրականացնելու համար: ՀՀ Կառավարությունը կարևորում է նաև ՀՀ անցակետերի ենթակառուցվածքների արդիականացման և կարողությունների ընդլայնման հիմնահարցերը: Վերջին տարիներին, Միացյալ Ազգերի Կազմակերպության Չարգացման Ծրագիրը (ՄԱՉԾ)՝ Եվրոպական Միության (ԵՄ) ֆինանսական օժանդակությամբ, արդիականացրել է Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերը, որոնք սահմանակից են Վրաստանի Հանրապետության հետ:

Չուգահեռաբար, ՄԱՉԾ-ը, Միգրացիոն Քաղաքականության Մշակման Միջազգային Կենտրոնի (ՄՔՄՄԿ) հետ համատեղ, ԵՄ ֆինանսավորմամբ, իրականացնում է "Աջակցություն Հայաստանին Միգրացիայի և Սահմանների Կառավարման Ոլորտներում" (ԱՀՄՄԿՈ կամ ՄԻԲՄԱ) ծրագիրը: ՄԻԲՄԱ ծրագիրն իրականացվում է ԵՄ-Հայաստան գործընկերության մասին համաձայնագրերի և ազգային ռազմավարական գերակայությունների շրջանակում՝ 2016թ.-ի հունվարից մինչև 2018թ.-ի դեկտեմբերը և, ի թիվս այլնի, միտված է աջակցել ՀՀ Կառավարությանը մշակել Հայաստանի՝ Իրանի Հանրապետության հետ սահմանային մասում գործող Մեղրի անցակետի արդիականացման աշխատանքների (նախատեսվող գործունեության) նախագծային և մրցույթային փաստաթղթերի փաթեթը: Նախատեսվող գործունեության նպատակն է՝ Մեղրի սահմանային անցակետի ենթակառուցվածքների արդիականացման և ժամանակակից սարքավորումներով համալրման միջոցով բարձրացնել դրա անվտանգության մակարդակը, ավելացնել տրանսպորտային միջոցների և ուղևորների թողունակությունը, իջեցնել ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությունը և այլն: Արդիականացված անցակետում ներդրվելու է նաև «մեկ պատուհան» համակարգը, ինչի արդյունքում բեռնափոխադրողները և սահմանային անցակետը հատողները կշփվեն մեկ մարմնի հետ:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ քաղաքաշինության բնագավառում՝ քաղաքաշինական կառույցներ 1500 մ²-ից ավելի կառուցապատման մակերեսով գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության:

2017-2018 թվականներին սույն նախագիծը արդեն իսկ ենթարկվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և 12.04.2018թ.-ին ստացել ՀՀ շրջակա միջավայրի (այդ ժամանակ բնապահպանության) նախարարության դրական փորձաքննական եզրակացությունը (տես Հավելված 7-ը), սակայն, քանի որ մեկ տարվա ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսել եզրակացությունը հաստատվելու պահից հաշվարկված 1 տարվա ընթացքում, այն ուժը կորցած է ճանաչվել:

Նախագիծը նաև ենթարկվել է քաղաքաշինական փորձաքննության «Հ.Ս.ՊՐՈ» ՍՊԸ լիցենզավորված ընկերության կողմից (լիցենզիա №17008) և 02.05.2019թ.-ին ստացել է դրական եզրակացություն:

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ԾՐԱՎԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

ՀՀ Վարչապետի 07.02.2019թ.-ի թիվ 101-Ա որոշմամբ ստեղծված Պետական համալիր փորձաքննություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի համակարգում ստեղծել փորձաքննական հանձնաժողովը, որում ներառված է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացուցիչը, 12.07.2019թ.-ին դրական եզրակացություն (Եզրակացություն №6) է տվել "Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում" նախագծին:

4. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

2016 թ.-ի հոկտեմբերի 3-ին Միգրացիոն Քաղաքականության Մշակման Միջազգային Կենտրոնը (ՄՔՄՄԿ) և ՄԱԶԾ-ը "Աջակցություն Հայաստանին Միգրացիայի և Սահմանների Կառավարման Ոլորտներում" ծրագրի շրջանակում ստորագրել են դրա իրականացման վերաբերյալ համագործակցության համաձայնագիրը: Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից:

ՀՀ Վարչապետի 2017 թ.-ի մարտի 21-ի թիվ 285-Ա որոշման համաձայն ՀՀ Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրիի մաքսային կետի արդիականացման և վերակառուցման ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված աշխատանքների համակարգողը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) է: Այդ նույն որոշմամբ Ծրագրի նախապատրաստական աշխատանքների համակարգման նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը: ՊԵԿ հանդիսանում է նաև այս Ծրագրի հիմնական շահառուն:

ՄԱԶԾ-ը պատասխանատու է ՄԻԲՄԱ ծրագրի սահմանների կառավարման բաղադրիչի և մասնավորապես այս նախագծի իրագործման համար, ներառյալ նախագծային և մրցույթային փաթեթի պատրաստման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շինարարական աշխատանքների մշտադիտարկման առաջադրանքները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը և փորձաքննական եզրակացությունների տրամադրումը իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Փորձաքննական Կենտրոնը (ՇՄԱՓԿ), որի օժտված է նաև հետևյալ լիազորություններով՝

- 1) Մասնակցում է փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական ակտերի մշակմանը,
- 2) Փորձաքննության գործընթացում պայմանագրային հիմունքներով ներգրավում է փորձագետներ,
- 3) Առնչվող մարմինների հետ համաձայնեցնում է և նախատեսվող գործունեության փաստաթղթերը,
- 4) Ապահովում է հանրային լուսմներում իր ներկայացուցչի մասնակցությունը,
- 5) Կազմում է ձեռնարկողին տրամադրում է տեխնիկական առաջադրանք:

Նախատեսվող գործունեության ազդակիր համայնքը Մեղրին է: ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի համաձայն, ազդակիր համայնքի ղեկավարը՝

- 1) Տրամադրում է նախատեսվող գործունեության վերաբերյալ կարծիք,

- 2) Ապահովում է նախատեսվող գործունեության ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ ծանուցման, հանրային լուսմների կազմակերպումը և հանրության մասնակցությունը,
- 3) Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում տրամադրում է ձեռնարկողին համապատասխան խորհրդատվության, ինչպես նաև ազդեցության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվություն:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

5.1 Ազգային նորմատիվաիրավական պահանջները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրությային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի: Սույն հոդվածի 8-րդ կետի համաձայն բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում իրականացվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրությային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուրմները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) և **"Կենդանական աշխարհի մասին"** (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" №71-Ն և **"ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին" №72-Ն** ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

"ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" ՀՀ կառավարության 31.07.2014թ. **№781-Ն** որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքի (1994 թ.) առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է: Օրենքը կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարկան նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին" թիվ 192 և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍՌԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձ գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը և դրանց հետ գործաձույթանը վերաբերվող ընդհանուր դրույթները:

Օրենսգրքի Գլուխ 13-ը սահմանում է հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, այդ թվում. հողամասն օգտագործման տրամադրելը (անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով), հողամասի կառուցապատման իրավունքը, հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները և հողամասի սերվիտուտը: Օրենսգրքի Գլուխ 15-ը նկարագրում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ընթացակարգը:

"Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին" թիվ 1026-Ն որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

"Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած նանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործաձույթի ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և շրջակա միջավայրի նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

"Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 2322-Ն որոշումը սահմանում է ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում առկա պատմամշակութային հուշարձանների ցանկը:

Տնտեսական գործունեության հետևանքով մթնոլորտային օդի և հողային ռեսուրսների վրա ազդեցության գնահատումը իրականացվում է.

- ՀՀ կառավարության "Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին" №91-Ն որոշմամբ:
- ՀՀ կառավարության "Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին" №92-Ն որոշմամբ:
- ՀՀ կառավարության "Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին" №1110-Ն որոշմամբ:

5.2 Միջազգային համաձայնագրերը

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է շրջակա միջավայրի ու հանրության պաշպանության և կառավարման ոլորտներում մի շարք միջազգային համաձայնագրեր, որոնց

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

ցանկը և ստանձնած պարտավորությունների ամփոփագրերը բերված են ստորև Աղյուսակ 1-ում: Նշված ցանկում ներառված են միայն այն համաձայնագրերը/կոնվենցիաները, որոնք առնչվում են Ծրագրին:

Աղյուսակ 1. Բնապահպանական և սոցիալական ոլորտներին առնչվող միջազգային համաձայնագրերը/ կոնվենցիաները և դրանցով ստանձնած պարտավորությունների ամփոփագրերը

Համաձայնագիրը կամ կոնվենցիան	Պարտավորությունների ամփոփագիրը
"Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշուների բնակավայր" կոնվենցիա (Ռամսար 1971թ.)	Միջկառավարական համաձայնագիր է, որն իրավական հիմք է ստեղծում խոնավ տարածքների թռչունների բնադրավայրերի պահպանման միջազգային համագործակցության համար: Համաձայնագրում նշված է խոնավ տարածքների տնտեսական, գիտական և ռեկրեացիոն նշանակությունը, իսկ ջրի թռչունները ճանաչված են որպես միջազգային նշանակության պաշար: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին: ՀՀ-ն միացել է որպես իրավահաջորդ:
"Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին" կոնվենցիա (Փարիզ, 1972թ.)	Համաշխարհային բնական և մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիայի նպատակն է ստեղծել մշակութային և բնական ժառանգության կոլեկտիվ պահպանության արդյունավետ համակարգ: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին: ՀՀ-ն միացել է որպես իրավահաջորդ:
"Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին" կոնվենցիա (Բոնն, 1979թ.)	«Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիան ուղղված է կենդանիների միգրացվող՝ ցամաքային և ջրային տեսակների և թռչունների պահպանմանը իրենց միգրացիայի տարածքում: Սա միջկառավարական պայմանագիր է, կնքված ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի (ՅՈՒՆԵՍԿՕ) հովանու ներքո, որը զբաղվում է վայրի կենդանիների և դրանց կենսապայմանների պահմանմամբ՝ համաշխարհային մասշտաբով: ՀՀ-ի կողմից վավերացվել է 2010թ.-ին:
"Կենսաբանական բազմազանության մասին" կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան կայուն զարգացման սկզբունքներին հետևելու կարևորության ճանաչումն է միջազգային հանրության կողմից: Կոնվենցիայի գլխավոր նպատակն է կենսաբազմազանության պահպանումը, կենսաբազմազանության բաղադրիչների կայուն օգտագործումը, գենետիկ ռեսուրսների համատեղ օգտագործումը, ներառյալ գենետիկ ռեսուրսների և տեխնոլոգիաների ազատ մատչելիությունը, անհրաժեշտ միջոցների տրամադրումը: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
ՄԱԿ-ի "Կլիմայի փոփոխության մասին" շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	Կլիմայի փոփոխության կոնվենցիան սահմանում է կլիմայի փոփոխության հետևանքների դեմ ուղղված միջկառավարական ջանքերի համընդհանուր շրջանակ: Այն ընդունում է, որ կլիմայի կայունությունը միացյալ համակարգ է, որը կարող է վտանգվել ածխածնի երկօքսիդի և ջերմոցային այլ գազերի արտանետումներով: Կոնվենցիան ունի գրեթե համընդհանուր անդամակցություն, այն վավերացրել են թվով 191 երկրներ: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
Կիոտոյի արձանագրություն (Կիոտո,	1997թ.-ին Կիոտոյի երրորդ համաժողովում ընդունել են

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Համաձայնագիրը կամ կոնվենցիան	Պարտավորությունների ամփոփագիրը
1997թ.)	արձանագրություն, որը զարգացած երկրների համար սահմանում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման պարտադիր քանակ, նպատակային ցուցանիշներ: 2008-2012 թվականներին՝ 1990 թվականի համեմատությամբ, այդ երկրների ընդհանուր արտանետումները կրճատվել են 5.2 %-ով: ՀՀ-ի կողմից վավերացվել է 2002թ.-ին:
"Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին" կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	Էսպոյի կոնվենցիան սահմանում է կողմերի պարտավորությունները՝ պլանավորման վաղ շրջանում որոշակի գործունեության բնապահպանական ազդեցությունը գնահատելու համար: Այն նաև սահմանում է պետությունների ընդհանուր պարտավորությունը՝ միմյանց տեղեկացնելու և խորհրդատվություն տրամադրելու այն բոլոր խոշոր ծրագրերի վերաբերյալ, որոնք կարող են զգալի բնապահպանական ազդեցություն ունենալ երկրների սահմաններից դուրս: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1997թ.-ին:
"Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին" կոնվենցիա (Օրիուս, 1998թ.)	Օրիուսի կոնվենցիան նոր տեսակի բնապահպանական համաձայնագիր է: Այն կապակցում է բնապահպանական և մարդու իրավունքները և հաստատում է այն, որ կայուն զարգացումը կարող է ապահովվել միայն բոլոր մասնակից կողմերի ներգրավման միջոցով: Կոնվենցիան անդրադառնում է հանրության և հանրային մարմինների փոխգործակցությանը ժողովրդավարական համատեքստում և առաջադրում է նոր գործընթաց միջազգային համաձայնագրերի իրագործման և բանակցություններում հանրային մասնակցության համար: ՀՀ-ի կողմից վավերացվել է 2001թ.-ին:

6. ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ


Նախագծով նախատեսված աշխատանքները/միջոցառումները միտված են Մեղրու սահմանային անցման կետի անխափան գործունեության համար անհրաժեշտ ճանապարհային ցանցի, շինությունների և ենթակառուցվածքների արդիականացմանը և ընդլայնմանը, արդի սարքավորումներով համալրմանը:

Գործող տեխնոլոգիական սխեման արդի պահանջներին համապատասխանեցնելու համար նպատակահարմար է հիմնովին փոփոխել անցակետի գլխավոր հատակագիծը: Այն ներառում է ճանապարհների ցանցի ընդլայնում, ՀՀ մտնող և դուրս եկող ճանապարհների ցանցի տարանջատում, հոսքերի առանձնացում: Բացի այդ, առկա վարչական շենքի դիրքը և այդ հատվածում մինչև Արաքս գետն ընկած տարածքի լայնքը, վարչական շենքի տեղափոխության անհրաժեշտություն են առաջացնում: Մաքսակետերին ներկայացվող արդի պահանջներից ելնելով, անհրաժեշտ են նաև բավարար հարաչափերով վարչական լրացուցիչ տարածքներ, այդ թվում նոր ենթակառուցվածքների համար: Մեղրու սահմանային անցակետի արդիականացման համար պահանջվում է նաև նոր հողատարածք՝ մոտ 2.3 հա մակերեսով:

6.1 Նախատեսվող գործունեության տարածքը

Մեղրու սահմանային անցման կետը գտնվում է Երևանից մոտ 400 կմ հեռավորության վրա, Երևան-Իրան Մ-2 մայրուղու վերջնահատվածում, Ագարակ բնակավայրի հարևանությամբ: Ըստ վարչական պատկանելիության, անցակետը գտնվում է Սյունիքի մարզում, Մեղրի համայնքի վարչական տարածքում և սփռված է Արաքս գետի հյուսիսային ափին, որը հանդես է գալիս որպես սահման Հայաստանի Հանրապետության և Իրանի Հանրապետության միջև: Մեղրու անցակետից մոտ 400 մ դեպի հարավ գտնվում է Իրանի Հանրապետության անցակետը (տես Նկար 1-ը):

Նկար 1. Մեղրի սահմանային անցակետի տեղադիրքը



Համաձայն նախագծային փաստաթղթերի, Մեղրի արդիականացված անցակետի տարածքը կազմելու է 8.64 հա, որից մոտ 6.2 հա գործող անցակետի տարածքն է, ևս մոտ 2.44 հա լրացուցիչ ձեռք է բերվելու Մեղրու համայնքապետարանից: Գործող անցակետի տեղանքը իրենից ներկայացնում է հիմնականում հարթ ասֆալտապատ տարածք: Լրացուցիչ հողատարածքը հիմնականում պատված է թփա-ծառային բուսականությամբ, գտնվում է Արաքս գետի և գործող անցակետի միջակայքում՝ գործող պետական սահմանի արգելված գոտում: Այն իր բացարձակ նիշով մոտ 5-6 մ ցածր է գործող նանապարհների ցանցից՝ և գտնվում է 500-510 մ բարձրության վրա: Ձեռք բերվող հողատարածքը այժմ որևէ նպատակով չօգտագործվող, գյուղատնտեսական կարիքների համար չկիրառվող տարածք է: Այն այժմ գրանցված է որպես բնակավայրերի կատեգորիայի հողատարածք: Ձեռք բերումից հետո հողատարածքի կատեգորիան (նշանակությունը) պետք է փոխվի հատուկ նշանակության:

Մեղրու սահմանային անցակետի սահմանից հաշվարկված Ագարակ բնակավայրի մոտակա բնակելի տունը գտնվում է մոտ 1000 մ հեռավորության վրա: Հեռավորությունը անցակետի սահմանից մինչև Իրանի Հանրապետության մոտակա Դուզալ գյուղը՝ մոտ 1400 մ է:

6.2 Անցակետի տեխնիկական բնութագիրը

Մեղրու սահմանային անցակետի գլխավոր հատակագծի վերակառուցման լուծումները թույլ կտան ավելացնել տրանսպորտային միջոցների և ուղևորների թողունակությունը մինչև օրական՝

- 900 միավոր մեքենա,
- 2000 ուղևոր ավտոբուսներով և 500 ուղևոր տերմինալում:

Անցակետի գլխավոր հատակագիծն (տես Հավելված 1-ը) իր մեջ ներառում է բոլոր ֆունկցիոնալ գոտիները, վարչական և տեխնոլոգիական շենք / շինությունները և ենթակառուցվածքները, որոնք անհրաժեշտ են բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, բեռների, ապրանքների, կենդանիների ստուգման և ձևակերպումների համար: Նախատեսված են հետևյալ շենք / շինությունները և ենթակառուցվածքները՝

- 1) Վարչական շենք, մաքսային և բռնկերային գրասենյակներ
- 2) Բեռնատար տրանսպորտի ռենտգենային զննման, տրանսպորտի մանրամասն զննման և սննդի զննման մասնաշենքեր
- 3) Շվաքարաններ
- 4) Էլ. հոսանքի ենթակայան
- 5) Հակահրդեհային ջրամատակարարման ռեզերվուարներ
- 6) Ուղղաթիռի կայանատեղի
- 7) Մուտք գործող և արտագնա բեռնատարների, արգելափակված բեռնատար և մարդատար մեքենաների կայանատեղի
- 8) Մարդատար և ծառայողական ավտոմեքենաների կայանատեղի
- 9) Օդակաձև հանգույց
- 10) Ավտոկշեռքներ
- 11) Մուտքն արգելված և բռնագրավված նյութերի պահեստներ
- 12) Ռադիոակտիվ ճառագայթման ստուգման և ավտոմեքենաների պետ.համարանիշերի զննման սարք, տրանսպորտի մանրամասն զննման մասնաշենք
- 13) Անմաքս առևտրի խանութ
- 14) Մեքենաների ռադիոակտիվ հսկման շրջանակ
- 15) Ջրամաքրման կայան
- 16) Մեկուսացված կենդանիների տարածք:

Վերը թվարկված շինությունների և ենթակառուցվածքների մեծ մասը ներկայումս գործում են, սակայն, ենթակա են վերակառուցման՝ նախագծային լուծումներին բավարարելու համար: Կառուցման և վերակառուցման/արդիականացման աշխատանքների նկարագիրը ամփոփված է սույն Հայտի բաժին 6.3-ում:

Աշխատանքային նախագծով Մեղրու սահմանային անցակետի տարածքում նախատեսված են նաև հետևյալ աշխատանքները՝

Քանդորման աշխատանքներ՝

- Վարչական շենք՝ մոտ 1,400 մ²
- «Ալլեգրա տրանս» ՍՊԸ-ի կողմից վարձակալված տարածքի պարիսպ՝ մոտ 5,000 մ²,
- Պոմպակայաններ և այլ օժանդակ շինություններ՝ մոտ 1,000 մ³:

Հողային աշխատանքներ՝

- Հանույթ (հողի բերրի շերտ)՝ 30,000 մ³

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

- Լիցք (գրունտ)՝ 230,000 մ³:

Բարեկարգման աշխատանքներ՝

- Ասֆալտ բետոնե պատվածք՝ 67,065 մ²
- Սիզամարգ՝ 2,379 մ²
- Մայթ՝ 8,632 մ²
- Եզրաքար՝ 4,205 գծ.մ:

Մեղրու մաքսակետի արդիականացման և վերակառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2021 թվականի սկզբին և ավարտել 2024 թվականին:

Որպես շինարարական և տրանսպորտային տեխնիկայի կայանման հարթակ և աշխատանքային հրապարակ օգտագործվելու է գործող մաքսակետի կայանատեղին:

6.3 Անցակետի հիմնական տարրերի նկարագիրը

6.3.1 Քանդման աշխատանքներ

Աշխատանքային նախագծով, անցակետի գործող վարչական շենքը և մի քանի այլ շինություններ ու ենթակառուցյուններ, այդ թվում Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի և Կարճևան համայնքի ջրամատակարարման համակարգերի պոմպակայանները, անցակետի տարածքում «Ալլեգրա տրանս» ՍՊԸ-ի կողմից վարձակալված տարածքի պարիսպը, շինությունները ու ենթա-կառուցվածքները ենթակա են քանդման և ապամոնտաժման: Հաշվարկված է, որ քանդման աշխատանքների արդյունքում կառաջանա մոտ 1200 մ³ ծավալով կամ մոտ 2000 տ զանգվածով շինարարական աղբ, որը հիմնականում բաղկացած է լինելու երկաթ-բետոնե ջարդոնից, տուֆի, բազալտի և այլ քարերի ջարդվածքից, միջնապատային սալիկներից, հարդարման երեսպատվածքից և սվաղվածքից, փայտանյութից, մետաղական տանիքից, բանեցված պատուհաններից և դռներից և այլն:

Գործող անցակետի տարածքի մի մասը՝ 16.02.2007 թ.-ին ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի հետ կնքված պայմանագրի համաձայն վարձակալության էր տրված «Ալլեգրա տրանս» ՍՊԸ-ին՝ բեռնափոխադրումների իրականացման նպատակով: Մեղրու մաքսակետի նախատեսվող արդիականացման աշխատանքների նպատակով ՊԵԿ-ը նախաձեռնությամբ «Ալլեգրա տրանս» ՍՊԸ-ի հետ կնքված տարածքի վարձակալության պայմանագիրը լուծվել է, փոխարենը առաջարկվել է գործունեությունը շարունակել Մեղրու ԱՏԳ տարածքում: «Ալլեգրա տրանս» ՍՊԸ-ի նախկինում վարձակալված տարածքում տնկված ծառերը պետք է վերատնկվեն Մեղրու մաքսակետի այլ կանաչապատ գոտիներում:

Նախատեսվում է վերանշյալ շինարարական աղբից առանձնացնել երկրորդային օգտագործման ենթակա նյութերը, հիմնական տանիքանյութը, դռները ու պատուհանները և անվճար տրամադրել Մեղրու համայնքի գյուղական բնակավայրերի բնակիչներին: Մնացած շինարարական աղբը տեղադրվելու է Ազարակի աղբավայրում (համաձայնեցված է Մեղրի համայնքի ղեկավարի հետ, տես Հավելված 4-ը):

6.3.2 Տեղանքի հարդարեցում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս օգտագործվող տարածքը չի բավարարում հոսքերի ավելացմանը՝ թե՛ մեկնող, թե՛ մուտք գործող ուղղություններով, անհարաժեշտություն է առաջանում կատարել նոր հողահատկացում՝ գոյություն ունեցող սահմանային անցակետի տարածքը դեպի կամուրջ: Այդ տարածքի ամենացածր նիշի բացարձակ արժեքը մոտ 5-6 մ ցածր է գործող ճանապարհների ցանցից:

Որպեսզի նոր հատվածը պիտանի լինի շահագործման համար, անհրաժեշտ է դեպի Արաքս գետ կատարվի մոտ 230,000 մ² ծավալով 4-րդ կարգի բնահողի լիցք (նախապես հանելով մոտ 30,000 մ³ բուսահողի շերտը), որի կայունությունը ապահովվելու նպատակով անհրաժեշտ է կառուցել հենապատ՝ Արաքս գետի հունով: Հենապատը նախատեսվում է կառուցել երկաթ-բետոնից՝ 3-7 մ բարձրությամբ (տեղանքից կախված) և մոտ 650 մ երկարությամբ: Գրունտի լիցքը նախատեսվում է իրականացնել շերտերով՝ մինչ հաջորդ շերտի լցումը նախորդը պետք է ենթարկվի տոփանման՝ թրթռագլորնի միջոցով: Լիցքի համար 4-րդ կարգի բնահողը հատկացվել է Մեղրի համայնքի կողմից (Մեղրի համայնքի ղեկավարի 2018թ.-ի մարտի 5-ի թիվ 312 գրություն, տես **Հավելված 4-ը**):

6.3.3 Գլխավոր վարչական շենք

Մեղրու սահմանային անցակետի գլխավոր վարչական շենքը երկհարկանի է, որի առաջին հարկը բաժանված է միաժամանակ երկու գոտիների՝ Հայաստան մտնող և Հայաստանից դուրս եկող, իրարից անկախ հատվածներից: Յուրաքանչյուր հատվածում նախատեսված են սպասարկող սրահներ, որտեղ մինչ սահմանային ստուգում անցնելը տեղակայված են հետևյալ ստուգման կետերը՝

- անցագրային ստուգման տաղավարներ, որոնք տեղակայված են մեկ գծով,
- փաստաթղթերի հատուկ ստուգման տարածք,
- նախնական ուսումնասիրության ստուգման տարածք այն անձանց համար, որոնց փաստաթղթերում կան անճշտություններ,
- հատուկ կահավորված տարածքներ այն անձանց համար, որոնք ենթարկվել են վարչական պատասխանատվության,
- արտերկիր մեկնող ուղևորների տրանսպորտային միջոց նստելու ռեժիմային գոտի,
- վիզաների տաղավարներ, իրերի և ուղևորների ռենտգեն ստուգման սարքեր, բժիշկների ծառայության, կենդանիների ստուգման բաժանմունքներ, բանկ, սահմանապանների համապատասխան ոլորտի սենքեր, պետքարաններ, այդ թվում նաև սակավաշարժ մարդկանց համար, մոր և մանկան սենք, աղոթքի սրահ, սրճարան, առանց մաքսավճարի ապրանքների առևտրի սրահներ՝ մուտքի և ելքի ուղղությունների վրա:

Երկրորդ հարկում տեղակայված են սահմանապահների, մաքսային ծառայության, ԱԻՆ-ի, մաքսանենգության ծառայությունների աշխատակազմի սենքերը, փախստականների և տեղահանվածների համար նախատեսված կացարանները, հերթափոխով աշխատողների համար նախատեսված ծառայողական հյուրանոցը, խորհրդակցությունների և վերապատրաստումների համար նախատեսված դահլիճը:

Նախատեսված են նաև օժանդակ, պահեստային տարածքներ, սերվեր, տղամարդկանց և կանանց հանդերձարաններ: Բոլոր սենյակները ապահովված են հողանցումով, օդափոխության, օդորակման և էլեկտրասնուցման համակարգերով:

6.3.4 Անասնաբուժական, սանիտարական և ֆիտոսանիտարական ստուգման կետ

Անասնաբուժական, սանիտարական և ֆիտոսանիտարական ստուգման մասնաշենքում նախատեսվում է իրականացնել կենդանիների և բուսական ծագման բեռների խորացված ստուգում, որն իր մեջ ներառում է կենդանիների ստուգում, լաբորատոր հետազոտությունների իրականացում, համապատասխան ջերմային ռեժիմով սենքերում բեռնավորված ապրանքի պահպանում:

Մասնաշենքում նախատեսված են 2 ֆունկցիոնալ տեղամասեր՝

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

- միահարկ օպերատիվ տեղամաս, որտեղ իրականացնում են ստուգման ենթակա բեռների բեռնում և բեռնաթափում, անալիզների և նմուշների վերցնում,
- երկհարկ վարչալաբորատոր տեղամաս, որտեղ տեղավորված են վարչական, կենցաղային և լաբորատոր կառույցները:

Օպերատիվ տեղամասում ստուգվող բեռի բարձրան և դատարկման համար նախատեսված են թեքահարթակով սենքեր, կարանտինի մեջ գտնվող բեռների պահեստ և բռնագրավված կենդանական և բուսական արտադրանքի համար 2 սառնարանային խցեր:

Վարչալաբորատոր տեղամասը ունի թեքահարթակով առանձին մուտք: Առաջին հարկում գտնվում են լաբորատորական, ստուգման, պահեստային սենյակներ և կենդանիների ժամանակավոր պահպանման սենյակները: Շենքի երկրորդ հարկում տեղակայված են վարչական և կենցաղային սենյակները:

Շենքն իրենից ներկայացնում է միաձույլ երկաթ բետոնե կարկասով և ուղղանկյուն հատակագծով կառույց: Շենքի կառուցման համար օգտագործվելու են տեղական նյութեր՝ արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել թեթև բետոնե 200 մմ բլոկներից, որոնց վրա նախատեսվում է ջերմամեկուսիչ շերտ (պոլիուրետանային փրփուր), ցեմենտավազային սվաղ և երեսապատում բազալտե և Անիի տուֆի սալիկներով: Բազալտե սալիկներով երեսապատվում են պատերը մինչև 1-ին հարկի պատուհանագոգը, որը միաժամանակ հանդիսանում է բազալտե երեսապատված հատվածի գլխաքար: Պատուհանագոգից բարձր երեսապատումը իրականացվում է Անիի տուֆի ծիրանագույն սալիկներով:

Մասնաշենքի տանիքը նախատեսվում է երկլանջավոր, ընդ որում յուրաքանչյուր լանջը նախատեսվում է առանձին՝ մեկ և երկհարկանի մասերի համար: Տանիքի լանջերը իրականացվում են թեք միաձույլ երկաթ բետոնե սալերից, որոնց ստորին տարածքում տեղակայված են վարչական և ծառայողական սենքերը: Այս տարբերակով 2-րդ հարկի սալի տակ ստացվում է մանսարդային հարկ, որը լիովին բավարարում է տարածքի շահագործման պահանջվող նորմերին: Տանիքը լուծված է որպես շերտավոր կոնստրուկցիա՝ ե/բ սալ, վրայից ջերմամեկուսիչ և զոլորշամեկուսիչ շերտ պոլիուրետանի փրփուրից՝ 50 մմ հաշվարկային հաստությամբ, որի վրա ձգվում է 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղի ծածկույթը:

6.3.5 Տրանսպորտային միջոցների մանրակրկիտ ստուգման մասնաշենքեր

Տրանսպորտային միջոցների և բեռների մանրակրկիտ ստուգման համար նախատեսված է կառուցել 2 առանձին՝ մեծ և փոքր, համապատասխան սարքավորումներով զինված և տեխնոլոգիական բոլոր պահանջներին համապատասխան մասնաշենքեր: Այստեղ իրականացվելու են մարդատար և բեռնատար ավտոմեքենաների բեռների մանրակրկիտ ստուգում, բեռնաթափում, առգրավված բեռների ժամանակավոր պահպանում՝ համաձայն մաքսային կանոնակարգի:

Տրանսպորտային միջոցների և բեռների մանրակրկիտ ստուգման համար նախատեսված մասնաշենքերը մեկ հարկանի, մեծ թռիչքներով՝ 22 մ x 30 մ և 12 մ x 24 մ սրահային տիպի կառույցներ են, ծածկը մետաղական ֆերմաներով, հետևաբար ներքին տարածքները ամբողջությամբ ազատ են կոնստրուկտիվ տարրերից՝ սյուներից և այլ շինություններից: Այս տարբերակը հնարավորություն է տալիս առանց որևիցե խոչընդոտի կազմակերպել ավտոմեքենաների և բեռների էլեկտրաամբարձիչներով տեղափոխման ազատ ներքին շարժումը:

Մասնաշենքերի կենտրոնական հատվածներում իրականացվում են մեքենաների զննման գործողություններ: Տրանսպորտային միջոցների ներքևից և վերևից զննման համար նախատեսված է կառուցել դիտահորեր և մետաղական վերնահարթակներ:

Մեքենաների ստուգման մեծ (22 մ x 30 մ) մասնաշենքում նախատեսվում է կազմակերպել դրանց խորը զննման 2 կետ, լվացման կետ, բռնագրավված ապրանքների / նյութերի ժամանակավոր պահեստավորում, ինչպես նաև առանձին գրասենյակային տարածք ծառայողների համար: Առգրավված բեռների / ապրանքների ժամանակավոր պահեստավորման համար նախատեսված են՝ 2 ընդհանուր պահեստ անվտանգ ապրանքների / նյութերի համար և 1 մեկ պահեստ թունավոր նյութերի / թունաքիմիկատների համար: Ընդհանուր պահեստների մուտքը կազմակերպված է ներքին սրահից, իսկ թունաքիմիկատների պահեստավորման համար նախատեսված պահեստը ունի առանձին մուտք և քարե միջնորմներով առանձնացված է մնացած ներքին տարածքներից: Մեքենաների ստուգման փոքր (12 մ x 24 մ) մասնաշենքում նախատեսվում է կազմակերպել մեքենաների խորը զննման համար 1 կետ և մեքենաների լվացման 1 կետ:

Ելնելով մասնաշենքերի տարածահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներից, շենքը նախատեսվում է իրականացնել համալիր կոնստրուկցիայով. կրող միաձույլ երկաթ-բետոնե կարկասով և կանոնավոր տուֆ քարի երկշար 400 մմ պատի շարվածքով: Պատի կոնստրուկցիան նախատեսվում է շերտավոր կտրվածքի՝ քարի շարվածք, ջերմամեկուսիչ շերտ պոլիուրետանային փրփուրով, ցեմենտավազային շաղախ, երեսապատում մինչև պատուհանագոգը բազալտե և պատուհանագոգից բարձր Անիի տուֆի ծիրանագույն սալիկներով:

Սրահների ծածկը իրականացվում է լայնական ուղղությամբ երկլանջանի 22 մ և 12 մ թռիչք ունեցող մետաղական ֆերմաների վրա ծածկի "սենդվիչ" տեսակի պանելների տեղադրումով:

6.3.6 Սահմանային անցակետի մուտքի և ելքի հսկման համար տաղավարներ

Նախատեսվող սահմանային անցակետի մուտքի և ելքի հսկման տաղավարները առանձին կանգնած, մեկ հարկանի շինություններ են, որտեղ նախատեսվում է կազմակերպել սահմանային ծառայություն 1-2 աշխատակիցներով ծառայողական աշխատանքի տեղերով, պետքարան և օժանդակ տեխնիկական սենյակ: Ծառայողական սենյակները ունեն առանձին ելք դեպի սահմանային անցակետի տարածք, դեպի մեկնող և ժամանող ուղևորատրանսպորտային հոսք:

Ծառայողական սենյակները ապակեպատ են, ինչը հնարավորություն է տալիս հստակորեն հսկել երթևեկելի հատվածը: Պատուհաններն ունեն բացվող հատվածներ, որոնց միջոցով իրականացվում է փաստաթղթերի փոխանակումը: Տաղավարներն ունեն երկաթ-բետոնե հիմնակմախք: Պատերը նախատեսված են 200 մմ պեմզաբլոկից, ջերմամեկուսիչով և երեսապատված տուֆ քարով:

6.3.7 Ծվաքարանի տակ գտնվող հսկման տաղավարներ

Նախագծվող սահմանային անցակետի հսկման տաղավարները առանձին կանգնած, մեկ հարկանի շինություններ են, որտեղ նախատեսված է կազմակերպել առանձնացված ծառայողական աշխատանքային տեղեր մաքսային, սահմանապահ և ՕՎԻԲ-ի ծառայության աշխատակիցների համար:

Յուրաքանչյուր աշխատատեղ ունի առանձին մուտք: Նախագծում են տարբեր նշանակության տաղավարներ և՛ մարդատար մեքենաների, և՛ բեռնատար մեքենաների ղեկավարում: Տաղավարներն ապակեպատ են, ունեն լավ տեսողաշտ, ինչպես նաև բացվող հատվածներ փաստաթղթերի ստացման և հանձնման համար: Հարկ է նշել, որ բեռնատար մեքենաների

վարորդներին բեռնատար մեքենաների սպասարկման հարմարվետության համար տաղավարի սենյակները գտնվում են բարձր նիշի վրա, մեքենայի վարորդի մակարդակին:

Տաղավարներն ունեն երկաթբետոնյա հիմնակմախք, պատերը քարից են, երեսապատված տուֆե սալիկներով, տանիքը լանջավոր՝ կազմակերպված ջրահեռացման համակարգով: Սահմանի մուտքի և ելքի վրա տեղակայված տաղավարներում նախատեսված են պետքարաններ:

6.3.8 Տրանսպորտային միջոցների ռենտգենային ճառագայթներով զննման մասնաշենք

Շենքը նախատեսված է պորտալային տեսակի ռենտգենահեռուստատեսային ստուգիչ սարքի տեղադրման համար: Շենքի ներսում տեղադրված ռենտգեն սարքի (սկաների) միջոցով իրականացվում է տրանսպորտային միջոցների և բեռների զննում:

Մասնաշենքը մեկ հարկանի, առանձին կանգնած շինություն է: Մուտքի մոտ տեղադրված է արգելափակոց, որը հուշում է մեքենայի կանգառի սահմանը: Հիմնական շենքի սպասարկման համար տարածքում տեղադրված են նաև օպերատորական և գույքի սենյակներ՝ վազոն տնակի տեսքով:

Պաշտպանիչ պատերը նախատեսվում են 6 մ բարձրությամբ, 850 մմ և 500 մմ հաստությամբ ծանր երկաթ-բետոն պատերով: Հիմքերը նախատեսված է կառուցել միաձույլ սալի տեսքով:

Շենքը հատակագծում ուղղանկյուն է՝ 33.0 մ x 12.05 մ առանցքային չափերով: Շենքի կրող կոնստրուկցիա են հանդիսանում ե/բ պատերը: Կողային ճակատներում նախատեսված է մեկական դարպաս՝ մեքենաների մուտք ու ելքի համար: Դարպասների կողային մասերում նույնպես նախատեսված են ծանր ե/բ պաշտպանիչ պատեր՝ 3.0 մ բարձրությամբ: Շենքում նախատեսված են դեֆորմացիոն կարեր: Կարերը նախատեսված են այնպես, որ կանխարգելեն շենքից ճառագայթման արտահոսքը:

Մասնաշենքի տանիքը երկլանջ է, ծածկը նախատեսվում է իրականացնել "Մենդվիչ" տիպի սալերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները մետաղական են: Շենքում ջերմամեկուսացում չի նախատեսվում: Ցոկոլային հատվածներում նախատեսված է երեսապատում բազալտե սալերով՝ 60 սմ և 90 սմ չափերով: Պատերի մնացած հատվածը նախատեսվում է երեսապատել Անիի տուֆի սալերով:

6.3.9 Ծառայողական մասնաշենք K-9

Մասնաշենքում տեղակայված են տեխնիկական և հատուկ նշանակության ծառայություններ՝ սահմանային անցակետի ենթակառուցվածքների սպասարկման համար:

Տնտեսական մասնաշենքը մեկ հարկանի է, այն իր մեջ ընդգկրում է երկու ֆունկցիոնալ տեղամասեր՝ ավտոհանգրվան՝ երկու մեքենայի համար և արհեստանոց, ինչպես նաև K-9 ծառայության տարածքներ: Վերջինիս կազմի մեջ են մտնում աշխատասենյակը, անձնակազմի հանգստի սենյակը, խոհանոցը, պետքարանը, ինչպես նաև շների համար նախատեսված վեց՝ խցերը իրենց տարածքներով:

Տնտեսական մասնաշենքում ընդգկված բոլոր ծառայություններն ունեն առանձին մուտքեր:

Մասնաշենքը հատակագծում ունի Դ-աձև տեսք և 17.0 մ x 19.8 մ առանցքային չափեր: Շենքը նախատեսվում է իրականացնել երկաթ-բետոնե պլոնա-հեծանային համակարգով: Արտաքին պատերը նախատեսված է իրականացնել 200 մմ թեթև բետոնե բլոկներից: Պատերի և տանիքի ջերմամեկուսացման համար նախատեսված է 50 մմ պալիուրետանի փրփուրի շերտ: Արտաքին պատերի երեսապատումը նախատեսվում է իրականացնել տուֆե և բազալտե սալիկներով:

Ցուկոլային հատվածում մինչև լուսամուտագոգը ներառյալ, նախատեսվում է երեսապատել բազալտե սալիկներով: Պատերի մնացած մասի երեսապատման համար ընտրվել է Անիի ծիրանագույն տուֆը:

Միջնորմները նախատեսվում են իրականացնել 100 մմ և 150 մմ թեթև բետոնե բլոկներից: Շենքը չունի ե/բ առաստաղ: Սենյակների մի մասի համար նախատեսված են կախովի առաստաղներ գիպակարտոնից և պլաստիկից: Մնացած հատվածներում, որպես առաստաղ է ծառայում տանիքի կոնստրուկցիան: Տանիքը երկթեք է՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Տանիքի կոնստրուկցիաները մետաղական են, ծածկույթը՝ գունավոր ալիքավոր թիթեղից: Շենքի ողջ պարագծով նախատեսվում է իրականացնել 1.5 մ լայնությամբ սալվածք: Պատերը նախատեսված են 200 մմ պեմզաբլոկից, ջերմամեկուսիչով, երեսապատված տուֆ քարով:

Շենքում անձնակազմի համար նախատեսված են աշխատասենյակ, հանգստի սենյակ, սանհանգույց, հանդերձարան և ցնցուղարան, խոհանոց (որը մաժամանակ ծառայում է նաև շների կերի պատրաստման համար):

Շենքում շների համար նախատեսված է 6 խուց և 6 բացօթյա տարածք: Շների խցերի համար նախատեսված է առանձին հատված՝ իր միջանցքով: Միջանցքում հարկավոր է տեղադրել ջրի ծորակներ՝ խցերի լվացման համար: Բացօթյա հատվածում խցերի միջև նախատեսված է պատի շարվածք, որպեսզի շները միմյանց հետ չշփվեն: Ճակատային հատվածում տարածքը փակված է մետաղական ցանցերով, որոնց մեջ նախատեսված են դռներ: Ցանցապատ հատվածում հարկավոր է նախատեսել շների կերակրման համար անհրաժեշտ անցքեր, առանձին շարժական ճաղավանդակներով: Շենքում նախատեսված են նաև անասնաբույժի սենյակ, շների լողացման սենյակ, պահեստ: Շենքի մի մասի շուրջ անհրաժեշտ է նախատեսել ցանցապատ բացօթյա տարածք՝ շների զբոսանքի և վարժանքների համար:

Մասնաշենքում գտնվում են նաև դրսի տեխնիկական աշխատողի սարքավորումների պահեստ, հավաքարարի պահեստասենյակ, կաթսայատուն և էլեկտրովահանակային սենյակ:

6.3.10 Ճանապարհային ցանց, կայանատեղիներ և այլ հարթակներ

Գոյություն ունեցող ճանապարհային ցանցը ասֆալտբետոնե է և կազմված է երկկողմանի երթևեկելի գոտիներից՝ յուրաքանչյուրը 3.5-4 մ լայնությամբ: Հայաստանից դեպի Իրան ելքի մոտ գոյություն ունեցող ճանապարհի յուրաքանչյուր կողմի լայնությունը ավելացվելու է մինչև 5.5 մ՝ գոյություն ունեցող կամուրջի չափերի (2 x 5.5 մ երթևեկելի մաս և 2 x 1.5 մ մայթեր) հետ համահունչ լինելու համար:

Ներկայումս, հսկիչ անցագրային կետերում (ՀԱԿ) հսկման գործընթացը բավականին դժվարեցված է: Աշխատանքային նախագծով նախատեսված է ՀԱԿ-ը իրականացնել 5 երթևեկելի գոտիներով (յուրաքանչյուր ուղղությամբ)՝ առանձնացնելով բեռնատար և մարդատար մեքենաների ուղիները: Նախագծով նախատեսվում է նաև բոլոր երթևեկելի գոտիները միմյանցից տարանջատել 4 մ լայնությամբ բաժանարար մայթերով՝ ապահովելով հսկման և ստուգման արագ գործընթացը:

Նախագծով նախատեսվում է մարդատար մեքենաների համար կառուցել 3 երթևեկելի գոտիներ՝ յուրաքանչյուրը 4 մ լայնությամբ և միմյանցից տարանջատել 4 մ լայնությամբ մայթ/բաժանիչ գոտիով և 2 երթևեկելի գոտիներ բեռնատարների և արտագաբարիտային բեռնատարների համար, համապատասխանաբար 4 մ և 5.5 մ լայնությամբ:

Հաշվի առնելով գոյություն ունեցող մեքենաների ինտենսիվությունը, նախատեսվում է բեռնատար և մարդատար մեքենաների ու սակավաշարժ ուղևորներով մեքենաների համար ավտոկայանատեղիներ՝ հետևյալ քանակությամբ՝

- Մարդատար մեքենաներ՝ 68 հատ
- Բեռնատար մեքենաներ՝ 70 հատ
- Սպասարկող անձնակազմի մեքենաներ՝ 60 հատ:

Աշխատանքային նախագծով նախատեսվում են նաև՝

- Հետիոտների համար նախատեսված մայթեր և հարթակներ,
- Տրասպորտային միջոցների համար նախատեսված կանգառներ,
- Ավտոբուսներին սպասող ուղևորների համար նախատեսված հարթակ՝ Հայաստան ժամանող և մեկնող ուղևորատրանսպորտային հոսքերի համար,
- Ուղղաթիռի կայանատեղի,
- Օդակաձև հանգույց և այլն:

6.3.11 Ենթակառուցվածքները

Էլեկտրատեխնիկական մաս

Բոլոր շինությունների համար նախագծվում է շանթարգելման և հողանցման համակարգեր, ներքին և արտաքին լուսավորության համակարգեր, ներքին էլեկտրասնուցման և վարդակային ցանցի համակարգեր: Արտաքին էլեկտրասնուցման համակարգը նախագծվում է ենթակայանից դեպի շինություններ անհատական սնուցման գծերով, որոնք անցկացվում են պլաստմասե կոշտ խողովակների և դիտահորերի միջով, 1-ին կարգի նշանակության շինությունների համար նախատեսվում է լրացուցիչ սնուցման մալուխ:

Գլխավոր շենքում նախատեսվում է նաև անխափան սնուցման սարք (UPS), որը սնուցում է աշխատատեղերի վարդակները: Արտաքին լուսավորությունը նախատեսվում է իրականացնել լուսադիոդային լուսատուներով տեղադրված ցինկապատ հենասյուների և շինությունների արտաքին պատերի վրա:

Ջեռուցում

Հաշվի առնելով տարածաշրջանի մեղմ կլիման նախատեսվում է անցակետի շենք / շինությունների ջեռուցումը ապահովել անհատական ջեռուցման համակարգերով և էլեկտրական կոնվեկտորներով: Մասնավորապես՝

- Վարչական շենքի ջեռուցումը նախատեսվում է իրագործել 2 գազի կաթսաների (յուրաքանչյուրը՝ 32 կՎտ հզորությամբ) և պանելային ռադիատորների միջոցով,
- Անասնաբուժական, սանիտարական և ֆիտոսանիտարական ստուգման շենքի ջեռուցումը՝ 2 գազի կաթսաների (յուրաքանչյուրը՝ 28 կՎտ հզորությամբ) և պանելային ռադիատորների միջոցով,
- Մնացած շենքերի ջեռուցումը իրագործվելու է էլեկտրական կոնվեկտորների միջոցով:

Գազամատակարարում

Գազամատակարարումը իրականացվելու է գործող համակարգով: Նախագծով նախատեսվում է միջին և ցածր ճնշման արտաքին գազատարների տեղադրում պոլիէթիլենային խողովակներից՝ համաձայն ԳՕՍՏ 50838-95 և պողպատյա էլեկտրաեռակցված խողովակներից՝ համաձայն ԳՕՍՏ

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

10704-91: Խողովակների տրամագծերը կորոշվի հիդրավիկական հաշվարկով գազի անհրաժեշտ ծախսերի և գազի սարքավորումներից առաջ անհրաժեշտ ճնշումների հիման վրա:

Խմելու տնտեսական ջրի մատակարարում

Մեղրու սահմանային անցակետի ջրամատակարարումը իրականացվում է տարածքում հորատված գործող արտեզյան հորից և 75 մ տրամագծով քաղաքային ջրազծից: Այս համակարգը ընդգրկում է ջրաղբյուրը, կից ջրաչափական հորով, ջրամբար, պոմպակայան՝ ներառած քլորակայանը, բաշխիչ ցանցը իր փակող և կարգավորող արմատուրաներով:

Համաձայն լաբորատոր անալիզի արդյունքների հորի ջուրը համապատասխանում է խմելու ջրին ներկայացվող պահանջներին, պահանջվում է միայն ջրի վարակազերծում քլորով:

Գոյություն ունեցող արտեզյան հորում տեղակայված է ՅԱԲ-10-120-60 տիպի խորքային պոմպ, $h=30$ մ խորության վրա: Առաջարկվում է այն փոխել նորով, կամ հորատել 2-րդ արտեզյան հոր, նույն խորությամբ՝ ջրամատակարարումը ավելի հուսալի դարձնելու համար:

Ջրի հաշվային ծախսերը և ջրամբարների ծավալները որոշվել են ըստ СНиП 2.04.02-84-ի: Ջրապահանջը կազմում է՝ $15.3 \text{ մ}^3/\text{օր}$, $6.41 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ 3.17 լ/վրկ :

Խմելու կենցաղային ջրի ջրամբարի ծավալը հաշվարկվել է 12 ժամվա միջին ջրածախսի չափով և կազմում է 8.0 մ^3 : Նախատեսվում է հատակազծում ուղղանկյուն $2.0 \text{ մ} \times 2.0 \text{ մ} \times 2.0 \text{ մ}$ ներքին չափերով ջրամբար թմբապատված, մտոցով և պարզեցված օդակլանիչ ֆիլտրով: Ջրամբարում նախատեսվում է լողանային փական ջրի առավելագույն մակարդակի դեպքում ջրի հոսքը դեպի ջրամբար ավտոմատ կերպով փակելու համար, մակարդակաչափ, որով ջրի նվազագույն մակարդակի դեպքում արտեզյան հորերի պոմպերին տրված ազդանշանով պոմպերը պետք է ավտոմատ կերպով միանան (արտեզյան հորերից մեկը), ինչպես նաև ևս երկու մակարդակաչափ ջրի առավելագույն և նվազագույն վթարային մակարդակների համար:

Պոմպակայանի ներսում տեղադրված են խմելու տնտեսական և հակահրդեհային պոմպային կայանքներ, շենքը համակցված է քլորակայանի հետ:

Ջրամատակարարման համար ընտրված է 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային) և մեմբրանային բաքով պոմպային կայան, որի յուրաքնչյուր պոմպի հարաչափերն են՝ $Q=4.93 \text{ մ}^3/\text{ժամ}$, $H=30-35$ մ: Հակահրդեհային համակարգի համար ընտրված է 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային) պոմպային կայանը, որի յուրաքնչյուր պոմպի պարամետրերն են $Q=63 \text{ խմ}/\text{ժ}$, $H=60.0$ մ:

Հակահրդեհային պոմպային կայանի մղման խողովակի վրա տեղադրված է էլ. շարժարերով փական, որի աշխատանքը պետք է ավտոմատ կերպով կապված լինի պոմպի աշխատանքի հետ և պոմպի գործարկումից հետո փականը պետք է բացվի, պոմպի անջատման դեպքում փականը ավտոմատ պետք է փակվի:

Ջրի վարակազերծումը նախատեսվում է իրականացնել կամ քլորակրի լուծույթով՝ հատուկ դոզավորող սարքավորման միջոցով, կամ Մանիկիտ քլորացման սարքով՝ հիպոքլորիդի հաբերով: Քլորի դոզան կազմում է $Q_{\text{քլ.}}=0.05$ կգ/ժամ, իսկ արտադրողականությունը՝ 1.2 կգ/օր: Քլորակայանը նախատեսվում է իրականացնել համակցված պոմպակայանի հետ առանձին մուտքով:

Ջրամատակարարման բաշխիչ ցանց

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Խմելու ջրի և հակահրդեհային ջրամատակարարման առանձին ներտարածքային ցանցերը իրականացված են պոլիէթիլենային բարձր խտության (HDPE) տիպի խողովակներից (P=1.0 ՄՊա), համաձայն գործող ստանդարտների: Արտաքին հրդեհամարումը իրականացվում է ստորգետնյա հրշեջ հիդրանտներից, որոնք տեղադրվում են օդակաձև ցանցի վրա նախատեսված ջրմուղի կյոր ե/բ հորերում: Ջրմուղի հորեր նախատեսված են նաև մասնաշենքեր մուտքագծերը փակող և կարգավորող արմատուրների տեղադրման հանգույցներում:

Հակահրդեհային ջրամատակարարման համակարգ

Անցակետի տարածքի հրդեհամարման համար նախատեսված է արտաքին հրդեհաշիջման համակարգ: Համակարգի սնման աղբյուր է հանդիսանում արտեզյան հորը (հորերը) և գործող ջրագիծը:

Արտաքին հրդեհաշիջման ելքը կազմում է 15 լ/վրկ (ՇՈՒՄ 2.04.02-84), իսկ ներքին հրդեհամարման ելքը՝ 2.5 լ/վրկ (ՇՈՒՄ 2.04.01-85): Հուսալի ջրամատակարարում ապահովելու համար նախատեսված են հակահրդեհային ջրամբարներ ջրի անձեռնմխելի պաշարով և պոմպակայան:

Նախատեսված է բարձր ճնշման հակահրդեհային համակարգ: Ջրմուղի ցանցը օդակային է և սնվում է պոմպակայանում տեղադրված հրշեջ պոմպերից: Արտաքին ցանցը մոնտաժվում է պոլիէթիլենային ճնշումային HDPE խողովակներից (P=1.0 ՄՊա)՝ ըստ Գ.ՕՍՍ 18599-83: Արտաքին հրդեհաշիջումը իրականացվում է ջրմուղի կյոր ե/բ հորերում տեղադրված հրշեջ հիդրանտներով:

Հակահրդեհային ջրամատակարարման ջրամբարներ

Հակահրդեհային ջրամբարների ծավալը հաշվարկված է, հաշվի առնելով ներքին հրդեհի և անցակետի տարածքի արտաքին հրդեհի մարման ջրապահանջը (հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը և տարածքի մակերեսը), որի համաձայն հրդեհի մարման համար պահանջվող ջրի ընդհանուր ծախսը 17.5 լ/վրկ է, (15 լ/վրկ՝ 3 ժամ տևողությամբ արտաքին մեկ հրդեհի մարման և 2.5 լ/վ՝ 3 ժամ տևողությամբ ներքին հրդեհի մարման համար): Նախատեսվում է հատակագծում ուղղանկյուն 6.0 մ x 6.0 մ x 3.2 մ ներքին չափերով ե/բ ջրամբարի կառուցում, թմբապատված:

Ջրամբարներից յուրաքանչյուրում նախատեսվում է լողանային փական՝ ջրի առավելագույն մակարդակի դեպքում ջրի հոսքը դեպի ջրամբար ավտոմատ կերպով փակելու համար, մակարդակաչափ, որով ջրի նվազագույն մակարդակի դեպքում արտեզյան հորերի պոմպերին տրված ազդանշանով պոմպերը պետք է ավտոմատ կերպով միանան (արտեզյան հորերից մեկը, քանի որ աշխատելու են հաջորդաբար), ինչպես նաև ևս երկու մակարդակաչափ ջրի առավելագույն մակարդակը և նվազագույն վթարային մակարդակների համար:

Ռոռզման ցանց

Տարածքի կանաչապատ տարածքների, ծառերի ու սիզամարգերի ջրումը իրականացվում է ռոռզման համակարգի միջոցով: Ռոռզման ջրաղբյուր ծառայում է արտեզյան հորը: Ջուրը վերցվում է արտեզյան հորից և մինչև քլորացումը լցվում ռոռզման ջրամբար, որտեղից պոմպերով մղվում է ռոռզման ցանց: Առաջարկվում է ռոռզման նպատակով հավաքել և օգտագործել մաքրված հեղեղատար և կենցաղային կոյուղու ջրերը:

Ռոռզման ջրի քանակը որոշվում է, կախված ծածկույթի տեսակից, կլիմայական պայմաններից: Ըստ նորմաների կանաչ տարածքի նորման 4 լ/մ² է, ասֆալտապատ մակերեսի նորման՝ 0.4 լ/մ², համապատասխան 1.2 հա և 8.1 հա մակերեսներով: Հետևաբար, ռոռզման ջրի օրական ծախսը կկազմի 80.4 մ³:

Ջրման ենթակա տարածքը բաժանված է տեղամասերի: Ջրման տեղամասերը իրարից առանձնանում են փականների միջոցով: Ոռոգման պոմպերի արտադրողականությունը ընտրված է ամենամեծ տարածքի համար անհրաժեշտ ջրի քանակից ելնելով: Ջրումը իրականացվում է ձեռքով, ոռոգման ծորակներին միացվող ռետինափողով:

Կենցաղային կոյուղու համակարգ և մաքրման կայան

Կենցաղային կոյուղու համակարգը ապահովում է մասնաշենքերից կեղտաջրերի ինքնահոս հեռացման, մաքրման և դեպի գետ լցնելու հնարավորություն, բացառելով սանիտարահիգիենիկ նորմաների խախտում: Կոյուղու բակային ցանցը ինքնահոս է: Այն հավաքում է մասնաշենքերի կոյուղու թողարկներից կեղտաջրերը և ուղղում տեղանքի ցածրադիր մասում նախատեսված մաքրման կայան:

Նախագծով նախատեսվում է 15.0 մ³/օր արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրի մաքրման կոմպակտ կայան, որտեղ կատարվում է եռաստիճան մաքրում և լրիվ կենսաբանական մաքրումից հետո մաքրված ջրերը ուղղվում են գետ կամ օգտագործվում ոռոգման նպատակով: Կայանը բաղկացած է հետևյալ բյուրերից՝

- Ընդունիչ խուց
- Աերացիայի բյուր
- Պարզեցման բյուր
- Տիղմի խտացման բյուր:

Կայանից առաջ նախատեսվում է ճաղավանդակի հոր առավել խոշոր մասնիկների բռնման համար: Մաքրված կեղտաջրի բնութագրեր են՝ ՌԿՊ՝ 10-20 մգ/լ սահմաններում, ՌՔՊ՝ 70-100 մգ/լ, N և NH₄ իոնների պարունակությունը՝ 15-20 մգ/լ, որը համապատասխանում է ջրի 4-րդ որակի դասին ըստ [18]-ի:

Կոյուղու ներտարածքային ցանցը իրականացված է պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից ռետինե սեղմիչ օղակներով: Խողովակների պատման անկյուններում, թեքությունների փոփոխման տեղերում, ուղղագիծ հատվածների յուրաքանչյուր 50 մ-ը մեկ տեղադրված են կոյուղու կլոր ե/բ հորեր:

Անձրևաջրերի կոյուղի համակարգ

Մասնաշենքերի տանիքներից, ինչպես նաև տարածքի ցածրադիր մասերում և ճանապարհներին տեղադրված անձրևընդունիչ հորերից և առվակներից հալոցքի ու անձրևի ջրերը հեռանում են անձրևատար կոյուղու ներտարածքային ցանցով դեպի տարածքի ցածրադիր մասում նախատեսված մաքրման կառուցվածքներ: Համակարգը ընդգրկում է կետային և գծային անձրևաընդունիչները, սվազորսիչները, ներտարածքային ցանցը իր դիտահորերով, մաքրման կոմպակտ կայան, թողարկ դեպի գետ:

Մաքրված անձրևաջրերը նախատեսվում են օգտագործել կանաչապատ տարածքների ոռոգման համար, որպես ոռոգման համակարգի սնման երկրորդ աղբյուր, այդ ջրերը ուղղորդելով ոռոգման ստորգետնյա ջրամբար: Անձրևատար կոյուղու ցանցը նախատեսված է պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից, որոնք միանում են իրար ռետինե սեղմիչ օղակներով: Խողովակների տրամագծերը ընտրվել են հեղեղային կոյուղու հաշվարկային ելքերի հիման վրա:

Աղբահանություն

Գործունեության ընթացքում առաջացած կենցաղային աղբը կուտակելու և կազմակերպված հեռացնելու համար Մեղրու անցակետի ողջ տարածքով նախատեսված է տեղադրել աղբամաններ, որոնցից աղբը պարբերաբար բեռնաթափվելու է 1 մ³ տարողությամբ շարժական կոնտեյներների մեջ: Աղբով լցված շարժական կոնտեյներները տեղադրվելու են կեղտաջրերի մաքրման կայանի մոտ, սահմանված ժամանակացույցի համաձայն բեռնաթափվելու են աղբատար մեքենաներ և տեղադրվելու Ազարակի աղբավայրում՝ համայնքային սանիտարական սպասարկման ծառայության կողմից: Մեղրի համայնքի ղեկավարի համապատասխան գրությունը կցված է (Հավելված 4) Աղբավայրը գտնվում է անցակետից մոտ 4 կմ հեռավորության վրա:

6.4 Ազդակիր համայնքի մոտեցումը նախատեսվող գործունեության վերաբերյալ

2017 թ.-ի նոյեմբերի 17-ին տեղի ունեցած հանրային քննարկման ընթացքում Մեղրի համայնքի ղեկավարը իր դրական արձագանքն է տվել նախատեսվող գործունեության իրականացմանը, նշելով որ այն դրական ազդեցություն կունենա թե համայնքի և թե հանրապետության զարգացման վրա, ինչպես նաև կնպաստի գրոսաշրջության զարգացմանը:

Մեղրի համայնքի ղեկավարը 2017 թ.-ի դեկտեմբերի 12-ի գրությամբ իր նախնական համաձայնությունն է տվել նախագծի իրականացմանը (տես Հավելված 2-ը):

2018 թ.-ի հունվարի 29-ին Մեղրի համայնքի ղեկավարի կողմից տրվել է նախատեսվող գործունեության թիվ 02 նախագծման թույլտվությունը (նարտարապետա-հատակագծային առաջադրանքը, տես Հավելված 3-ը):


7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

7.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը


Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Մեղրի համայնքի վարչական սահմաններում, Ազարակ բնակավայրի հարավային մասում (տես Նկար 2-ը): Այն տեղակայված է Արաքս գետի հյուսիսային ափին ծովի մակերևույթից 534 մ բարձրության վրա և սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը: Հեռավորությունը մարզկենտրոն Կապան քաղաքից՝ 80 կմ է, Մեղրի քաղաքից՝ 10 կմ է, Երևանից՝ մոտ 400 կմ: Մեղրու անցակետից մոտ 400 մ դեպի հարավ գտնվում է Իրանի Հանրապետության անցակետը:

Գիտարկվող տարածքի արևմտյան մասում գտնվում է Չանգեզուրի, իսկ հյուսիսային և արևելյան մասերում Մեղրիի լեռնաշղթաները (տես Նկար 3-ը): Չանգեզուր լեռնաշղթայի երկարությունը 140 կմ է, իսկ ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է՝ 3904 մ: Մեղրիի լեռնաշղթայի երկարությունը 60 կմ է, իսկ ամենաբարձր լեռնագագաթը Բազացսարն է՝ 3256 մ: Տարածաշրջանի ռելիեֆը երոզիոն է՝ լերկուտներով և իրենից ներկայացնում է խոշոր միջօրեականային իջույթ՝ Չանգեզուրի լեռնաշղթայի և Մեղրու-Կարճևանի ջրբաժան կատարի միջև: Իջույթը հյուսիսից դեպի հարավ պարփակված է բարձր լեռնաշղթաների լեռնաճյուղերով՝ արևմուտքից - Չանգեզուրի լեռնաշղթայի ճյուղերով, հյուսիսից և արևելքից - Մեղրու շղթայի ճյուղերով, հարավից (Արաքսից դուրս) - Իրանական լեռներով: Ամբողջ իջույթը մասնատվում է ոչ մեծ լեռնային գետակներով, որոնց հովիտները ձգվում են լայնական ուղղությամբ և ձևավորում խիստ կտրատված, երբեմն կանյոնաձև կիրճեր՝ ջրբաժանների մոտ գրեթե միշտ ծածկված են դարավանդային նստվածքներով: Կան ոսկու, բազմամետաղային, պղնձի, մոլիբդենի, նեֆելինային սիենիտի, երկաթի, կրաքարի հանքավայրեր:

Նկար 2. Մյունիքի մարզը և նախատեսվող գործունեության տարածքը




Նկար 3. Տարածաշրջանի լեռնաշղթաները



Տարածաշրջանում տիրապետում է ցածր և միջին լեռնային հետանտառային լանդշաֆտային գոտին (Նկար 4):

Նկար 4. Տարածաշրջանի լանդշաֆտային գոտիները



Աղբյուրը՝ Հայաստանի ջրային ռեսուրսների ստյա, 2008

7.2 Տարածաշրջանի երկրաբանությունը

Դիտարկվող տարածքը գտնվում է Չանգեզուրի հանքային շրջանում: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում առաջնային դեր են խաղում գրանիտի ընտանիքի երրորդական ինտրուզիվ ապարները: Պարփակող ապարազանգվածը կազմված է տուֆապորֆիրիտներից՝ իրենց ենթարկված նստվածքային ապարների հետ: Շրջանի կառուցվածքային դիրքը որոշվում է իր տեղադրվածությամբ Մեղրի-Թեյի ենթամիջօրեականային գրաբեն-կառուցվածքում՝ ձևավորված Տաշտունի տարածաշրջանի խզվածքի վերնակողում, որն այստեղ ներկայացված է երկու մեծ խզումներով: Հրաբխածին-նստվածքային և հրաբխածին գոյացությունները (Էոցեն) պահպանվել են տանիքի ոչ մեծ մնացորդների տեսքով, մեծ մասամբ ներկայացված են խիստ ջարդոտված անդեզիտներով:

Առավել երիտասարդը՝ ստորին պլիոցենային հասակի ցամաքածին-լճային գոյացությունները, որոնք ծածկված են բավականին հզոր (մինչև 100 մ) կոպտաբեկոր դելյուվիալ նստվածքների ստվարաշերտով (այսպես կոչված "կարմիր բրեկչիաներ"): Ժամանակակից երկրաբանական գործնթացները ներկայացված են լեռնային ապարների ջերմաստիճանային հողմնահարմամբ, նրանց հետագա տեղաշարժով կտրուկ գառնիթափ լանջերից դեպի խորը կիրճեր:

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են խիտ ճաքավոր հրաբխային, հրաբխանստվածքային կազմավորումները և դրանց ինտրուզիվ և ենթահրաբխային ապարները: Դրանք կազմում են համակովկասյան տարածման անհամաչափ կամարածալք: Ծալքը խզված է բազմաթիվ խոշոր դիպլունկցիային խախտումներով: Տեկտոնիկ խզվածքները հատում են ապարները տարբեր ուղղություններով: Արմատական ապարները հիմնականում ներկայացված են պորֆիրիտներով և նրանց հրաբեկորներով: Առավել ճեղքավոր են հողմնահարման կեղևը և տեկտոնիկ խզվածքները: Մայր ապարները ամենուր ծածկված են թույլ ջրանցիկ ավազակավով կամ սակավազոր խճային և խճավազա-կավավազային էյուվիալ-դելյուվիալ նստվածքներով:

7.3 Սեյսմատեկտոնիկ պայմանները

Տեկտոնական տեսակետից տարածքը գտնվում է Միսիան-Չանգեզուրյան գեոանտիկլինալ գոտու հարավային մասում: Շրջանը մտնում է Սյունիքի սեյսմոակտիվ գոտու մեջ, որի գեոդինամիկայի բնույթը և սեյսմիկան հիմնականում պայմանավորված են ակտիվ խզման խախտումներով: Այստեղ զարգացած է հյուսիս-արևմտյան և ենթամիջօրեականային խզվածքների խախտման համակարգը: Հյուսիս-արևմտյան տարածման ռեգիոնալ խզվածքները (Տաշտունի, Ագարակի) դիտվում են զգալի հեռավարությունների վրա՝ մոնցոնիտների և պորֆիրանման գրանիտների կոնտակտի երկայնքով: Շրջանում բացառիկ դեր է կատարում Տաշտունի II կարգի խզվածքը, որը անցնում է ենթամիջօրեականային ուղղությամբ՝ ք.Ագարակ - գ.Լիճք - Տաշտունի լեռնանցք - ք.Քաջարան - Որոտանի լեռնանցք: Խզվածքը վարնետքային տիպի է, դիտարկվող շրջանում այն ներկայացված է ջարդոտված, տրորված, միոնիտացված ապարների հզոր գոնայով: Խզվածքի հիմնական կարը տեղադրված է գրանոդիորիտների և գրանոսիենիտների կոնտակտում: Այստեղ, մերձխզվածքային գծում ինտենսիվ զարգացած են հիմնական կառուցվածքների հետ համակցված տեկտոնիկ ճեղքերը՝ մեծամասամբ հյուսիս-արևելյան ուղղվածությամբ: Կարճևան գյուղի շրջանում դիտվում է երիտասարդ գրանոդիորիտներում ձգված հիմնական կարի բավական խոշոր ճյուղավորվածություն:

7.4 Տարածաշրջանի հողերի նկարագիրը


Նախատեսվող գործունեության տարածաշրջանում տարածված են լեռնային դարչնագույն անտառային հողերի կարբոնատային ենթատիպերը՝ իր տափաստանեցված, ոչ լրիվ ձևավորված, թույլ հզորությամբ, ավազակավային, միջին, տեղ-տեղ ուժեղ էրոզիացված ենթատեսակներով: Չանգեզուրի լեռնաշղթայում այս հողատիպը տարածված է ծովի մակարդակից 500-1700 մ բարձրությունների սահմաններում, իսկ հարավային դիրքադրության չորային լանջերում դրանք հասնում են մինչև 2400 մ բարձրության: Լեռնային դարչնագույն անտառային հողերի ռելիեֆը բնորոշվում է բազմաթիվ բարձրություններով՝ լեռնաշղթաների տեսքով և ջրաբաժան լեռնագագաթներով, ինչպես նաև իջվածքներով, որոնք իջնում են կիրճեր և գետահովիտներ: Լեռնային դարչնագույն անտառային հողերի հիմնական հողագոյացնող ապարներն են հանդիսանում պորֆիրիտների, դոլոմիտների, կրաքարի, կոնգլոմերատների, ավազի, գրանոդիորիտների քայքայված կառուցվածքները: Դրանք հիմնականում ներկայացված են հողմնահարված կարբոնատային և բարձրհիմնային ավազակավով, հազվադեպ՝ կավով, որոնց հզորությունը կարող է հասնել 1.5-2 մ: Տաք, մեղմ, փոփոխական և խոնավ կլիման, հողառաջացման ակտիվ շրջանի մեծ տևողությունը, բավարար ներքին դրենաժային համակարգի առկայությունը և ներհողային հոսքերի ուղղությունների սեզոնային փոփոխությունը նպաստում են առաջնային միներալների խորը և ինտենսիվ հողմնահարմանը, երկրորդային հանքային նյութերի առաջացմանը, ինչպես նաև բավականին հզոր կավայնացված հողերի ձևավորմանը:

Լեռնային դարչնագույն անտառային հողերի ենթատիպերում տարբերվում են կավային, խճաքարային, նստվածքա-կարբոնատային, ոչ լրիվ ձևավորված տեսակներ: Այս հողերի բարելավման և էրոզիայի կանխման համար անհրաժեշտ է լավ զարգացնել անտառամեղիորատիվ և հողաբարելավման աշխատանքներ, այսինքն իրականացնել շերտավոր հողօգտագործում, ստեղծել բուֆերային շերտեր, դարավանդավորել լանջերը, ձորերի լանջափեշերը:

7.5 Տարածաշրջանի ջրագրությունը

Շրջանի ջրագրական ցանցը ներկայացված է Արաքս գետի Կարճևան վտակով (Նկար 5):

Նկար 5. Տարածաշրջանի ջրային ռեսուրսները



Կարճևան գետակ

Կարճևան գետակը սկիզբ է առնում Չանգեգուրի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջերից մոտ 2400-2500 մ նիշից: Այն անցնում է Կարճևան և Ագարակ բնակավայրերի միջով և թափվում է Արաքս գետը: Կարճևան գետակի ընդհանուր երկարությունը կազմում է 10.6 կմ: Գետակի ջրիավառ ավազանի ընդհանուր մակերեսը կազմում է 27.9 կմ²: Ջրի աղտոտվածությունը կապված է ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործոններով:

Շրջանի ռելիեֆը էրոզիոն-տեղատարումային տիպի է: Գետակի հովիտը ձևավորում է խիստ կտրատված կիրճ՝ ջրբաժանի մոտ ծածկված դարավանդային նստվածքներով: Գետի ավազանը ամենուր մերկացված է և կտրատված պարբերաբար գործող բազմաթիվ հեղեղատներով և ձորակներով: Հովտի հատակը ծածկված է պրոյուվիալ-դելյուվիալ նստվածքներով, ներկայացված է խճով, խճավազով, հազվադեպ մեծաբեկորներով՝ մանրահատիկ ավազակավային լցանյութով: Գծային էրոզիան շատ մեծ է, քայքայված նյութի շեղումը ընթանում է մեծ արագությամբ: Այդ պատճառով կախված նյութերի պարունակությունը գետի ջրերում աճում է ավելի քան 40 անգամ: Հանքային դաշտի միջով հոսող մակերևութային ջրահոսքերը ունեն խիստ փոփոխված քիմիական կազմ, ինչն էլ պայմանավորվում է սուլֆատ-իոնի, մետաղների պարունակությունների աճով գետի ամբողջ երկայնքով:

Մարդածին գործոնի ազդեցությունը պայմանավորված է Ագարակի պնձամոլիբդենային կոմբինատի արտադրական հոսքաջրերով (գետակը սակավաջուր է) և մարդկանց տնտեսական գործունեությամբ (գետակը հոսում է Կարճևան և Ագարակ բնակավայրերի տարածքով):

Արաքս գետ

Արաքսը Հայաստանի ամենամեծ գետն է, սկիզբ է առնում Բյուրակ լեռնազանգվածում, ծովի մակերևույթից մոտ 2700 մ նիշի վրա: Արաքս գետի ընդհանուր երկարությունը 1072 կմ է, իսկ ջրիավառ ավազանի մակերեսը՝ 102 հազ.կմ²: Արաքս գետի ավազանը ընդգրկում է Հայաստանի

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

տարածքի 73.5%-ը և հանդիսանում է ջրընդունիչ բոլոր հարավային շրջանի գետերի համար: Գետի սնուցումը խառն է: Գարնանը, կապված ձնհալքի և առատ անձրևների հետ, տեղի են ունենում վարարումներ: Արաքսը ջրառատ գետ է, ջրի առավելագույն ծախսը դիտվում է ապրիլ-մայիս ամիսներին և հասնում 550 մ³/վրկ:

Արաքս գետի ջրերի հանքայնացումը ենթարկված է խիստ արտահայտված սեզոնային տատանումներին: Ջրի բաղադրությունը փոփոխվում է զգալի սահմաններում՝ ինչպես տարվա կտրվածքով, այնպես էլ ըստ գետի երկարության: Գետի ջրերը բավականին պղտոր են:

7.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Շրջանի կլիման մոտ է մերձարևադարձայինին, բայց տարբերվում է դրանից ձմեռային տեղումների ավելի ցածր քանակով և ավելի մեծ մայրցամաքությամբ: Տեղական կլիման բնութագրվում է կարճ և մեղմ ձմեռներով և շոգ, երկար ամառներով: Անսառնամանիք օրերի ժամանակաշրջանը միջինում կազմում է 252 օր:

7.6.1 Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -18°C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 43°C, ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝ 26.3°C: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Մեղրու տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են ստորև [Աղյուսակ 1](#)-ում:

Աղյուսակ 1. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակար դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Մեղրի	627	1.5	3.5	8.2	14.1	18.8	23.2	26.3	25.9	21.5	15.3	9.3	4.0	14.3	-18	43

7.6.2 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 61%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 56%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 38%:

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	ըստ ամիսների											ամենացուրտ ամսվա, %		ամենաշոգ ամսվա, %		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր	

Մեղրիի մարտակետի արդիականացում և վերակառուցում

ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Մեղրի	65	61	62	62	62	55	50	52	60	67	68	66	61	56	38
-------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

7.6.3 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 280 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 50 մմ, նվազագույնը հուլիս-օգոստոս ամիսներին՝ 8-11 մմ: Հաստատուն ձյունածածկույթը հազվադեպ է և գոյանում է միջինը 10 տարին մեկ: Ծրջանում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը (տարեկան գոլորշունակությունը կազմում է 1000 մմ-ից ավել), այդ պատճառով կլիման չոր է: Երաշտով տասնօրյակների թիվը տարում կազմում է 4-6: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Մեղրու տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օրերևութամասնական կալանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$, մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելագույն տասնօրյակից բարձրությունը, սմ	Տարվա մեջ իսկապես ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր
Մեղրի	16	18	32	42	50	27	11	8	12	24	25	15	280	27	15	25
	25	22	32	36	46	38	39	53	28	35	45	18	53			


7.6.4 Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված է ստորև Նկար 6-ում:


Քամու միջին արագության ամենամեծ արժեքները գրանցված են ապրիլ ամսին՝ հյուսիսային, հյուսիս-արևմտյան և հուլիս ամսին՝ հարավ-արևելյան ուղղություններով, և կազմում են 2.4 մ/վրկ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագություն ամենամեծ արժեքը ստացվում է հուլիս ամսին և կազմում է 1.6 մ/վրկ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 1.3 մ/վրկ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥ 15 մ/վրկ) 1-ն է:

Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են ստորև Նկար 7-ում: Ինչպես երևում է Նկար 6-ից դիտարկվող տարածքում գերակշռում են արևելյան և հարավ-արևելյան ուղղությամբ քամիները: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին արևելյան ուղղությամբ և կազմում է 36%:

Նկար 6. Քանու միջին արագությունների բաշխվածությունը



Նկար 7. Քանու ուղղությունների կրկնելիությունը



7.7 Մթնոլորտային օդի որակը

Մեղրիի համայնքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ ավտոտրասպորտը և տարածաշրջանում գործող հանքարդյունահանող ձեռնարկությունները, մասնավորապես "Ագարակի ՊՄԿ"-ն (արտադրում է պղնձի և մոլիբդենի խտանյութ), "Վարդանի գարթոնքը" ՍՊԸ-ն (արտադրում է ոսկու խտանյութ) և "Միփան-1" ՍՊԸ-ն (արտադրում է ոսկու խտանյութ):

2013 թ.-ին, Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնը Մեղրիի համայնքում տեղադրված 3 դիտակետերի միջոցով իրականացրել է ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Արդյունքում, մթնոլորտում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում¹:

7.8 Աղմուկը և թրթռումը

Գործող անցակետի տարածքում աղմուկի ֆոնային մակարդակը ձևավորվում է մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցների երթևեկությունից, անցակետի սարքավորումների և ենթակառուցվածքների (պոմպակայան, օդափոխության համակարգ և այլն) աշխատանքից և այլ մարդածին գործունեությունից: Տարածքում կատարված դաշտային հետազոտությունների արդյունքում աղմուկի միջին մակարդակը չէր գերազանցում "Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում" №2 III-11.3 սանիտարական նորմերով սահմանված ձայնի համարժեք (միջին) և առավելագույն նորմատիվ արժեքները (տես Աղյուսակ 4-ը):

Աղյուսակ 4. Ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները (ՍԹՄ)²

№	Մեներք և տարածքներ	Ձայնի համարժեք թույլատրելի մակարդակները, դԲԱ	Ձայնի առավելագույն թույլատրելի մակարդակները, դԲԱ
1	Աշխատատեղ	80	
2	Խանութների առևտրի սրահներ, օդանավակայանների և կայարանների սպասասրահներ, կենցաղային սպասարկման կազմակերպությունների ընդունման կետեր	60	75

7.9 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանին մոտակա հատուկ պահպանվող տարածքը՝ "Արևիկ" ազգային պարկն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի №1465-Ն որոշմամբ, միավորվել է "Շիկահող" պետական արգելոցին, ստեղծելով "Չանգեզուր" կենսոլորտային համալիր" ՊՈԱԿ-ը: "Չանգեզուր" կենսոլորտային համալիր" ՊՈԱԿ-ը իր մեջ ներառում է նաև "Մոսու պուրակ", "Չանգեզուր", "Խուստուփ", "Բողաքար" և "Սև լիճ" պետական արգելավայրերը (տես Նկար 8-ը): Մոտակա հեռավորությունը նախատեսվող գործունեության տարածքի և "Արևիկ" ազգային պարկի միջև 5 կմ:

¹ ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին տեղեկանք, Օդային ավազան, 2013թ.


² Միայն ցերեկային ժամերի համար ՍԹՄ-երը բերված են Աղյուսակ 3-ում

"Արևիկ" ազգային պարկը գտնվում է Մյունիքի մարզում Չանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջին, ինչպես նաև Աստղաձոր և Նյուվաղի գետերի ջրահավաք ավազանում: Մակերեսը կազմում է 31211.19 հա: Պահպանության օբյեկտը Մեղրիի եզակի բուսական և կենդանական աշխարհն է:

Ազգային պարկի տարածքում առկա են ուղղաձիգ բնական գոտիներ և լանդշֆտների տարբեր տեսակներ՝ ալպյան մարգագետիններ, լեռնային տափաստաններ, անտառային զանգվածներ, կիսաանապատներ: Ազգային պարկը ունի հարուստ կենսաբազմազանություն՝ առաջավորասիական ընձառյուծ, բեզուրյան այծ, հայկական մուֆլոն, միջերկրածովային կրիա, հայկական իժ, կովկասյան ջրասամույր, կասպիական հնդկահավ, կովկասյան մայրեհավ:

Բուսական աշխարհը նույապես հարուստ է: Կարմիր գրքում գրանցված տեսակներից հանդիպում են չորապտեր արծվապտերային, Գրիֆիթի հուդայածառ, վայրի ձմերուկ, անմեռուկ կլորատերև, կատվադաղձ լերդախոտատերև, թրաշուշան աղասեր, սագասոխուկ ցողունավոր, սարդակիր կովկասյան, խոլորձ կետավոր, սարդակիր կովկասյան:

Նկար 8. Նախատեսվող գործունեության և շրջակայքում գտնվող հատուկ պահպանվող տարածքների տեղադրությունը



ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի "Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին" № 967-Ն որոշման համաձայն, Մեղրու տարածաշրջանում գտնվում են հետևյալ հուշարձանները՝

- "Մալևի ինտրուզիա" ներժայթուկը
Գտնվում է Մյունիքի մարզում, Մեղրիի ենթատարածքում, Ալվանք գյուղից մոտ 1-1.5 կմ դեպի հյուսիս, լքված Մալև գյուղի մոտ,
- "Ագարակի" բրածո ֆլորան
Գտնվում է Մյունիքի մարզում, Ագարակ քաղաքում:

Նշվածներից երկուսն էլ գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից բավականաչափ հեռավորության վրա և ազդեցության չեն ենթարկվի:

7.10 Պատմամշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 29.12.2005թ.-ի "Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 2322-Ն որոշման համաձայն՝ Մեղրի բազմաբնակավայր համայնքի Ագարակ քաղաքում առկա է 7 պատմամշակութային հուշարձան: Դրանցից 5-ը (Խաչքար արցախյան ազատամարտիկներին (1994), Ստեփան Շահումյանի կիսանդրի (1977), Սուրեն Սպանդարյանի կիսանդրի (1977), Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին հուշարձան (1977) և Հուշարձան "Փառք աշխատանքին" (1980)) տեղադրված են քաղաքային հրապարակում, մեկը (Հուշարձան հոկտեմբերյան հեղափոխության 60 ամյակին (1980)) քաղաքային զբոսայգում: Եվս մեկ պատմական հուշարձան՝ 17-րդ դարի քարավանատունը, գտնվում է Արաքս գետի ձախ ափին, Մեղրի-Ագուլիս-Չուղա հին ճանապարհի վրա և ներկայումս գործում է որպես "Արաքս" ռեստորան:

Վերը թվարկված բոլոր պատմամշակութային հուշարձանները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից բավարար հեռավորության վրա և չեն կարող ազդվել, թե Մեղրու մաքսակետի արդիականացման/վերակառուցման և, թե հետագա շահագործման ընթացքում:

7.11 Բուսական և կենդանական աշխարհը

7.11.1 Բուսական աշխարհը

2018 թվականի օգոստոս ամսին, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Բուսաբանության ինստիտուտի կողմից իրականացվել Սյունիքի մարզի Ագարակ բնակավայրի շրջակայքում գտնվող «Մեղրի» պետական սահմանային անցակետի արդիականացման ծրագրով նախատեսված ընդլայնվող տարածքի բուսաբանական ուսումնասիրություն, որի հաշվետվությունը բերված է սույն Հայտի Հավելված 8-ում:

Ուսումնասիրման ենթարկվել է թե արդեն իսկ գործող մաքսակետի տարածքը և թե Արաքս գետի ձախակողմյան ափի երկայնքով բնական բուսականությամբ ծածկված հատվածը (ընդլայնման տարածքը):

7.11.2 Կենդանական աշխարհը

Անողնաշարավորներ - *Invertebrata*

Տարածաշրջանում առկա են բզեզների ավելի քան 36 տեսակ, որոնք թվարկված են Աղյուսակ 6-ում: Այս խումբը առավել բազմաթիվ է և բազմազան, գրավում է գերիշխող դիրք տարածքի բոլոր բիոտոպներում և այսպիսով բավարար ռեպրեզենտատիվ է (ներկայացուցչական):

Աղյուսակ 6. Տարածաշրջանում հանդիպող բզեզների հիմնական տեսակները

№	Բզեզների ընտանիքները և տեսակները
Ընտանիք Գնայուկ բզեզներ - Carabidae	
1	Perileptus areolatus
2	Harpalus rufipes
Ընտանիք Թերթիկաբեղավորներ - Scarabaeidae	
3	Oxythyrea cinctella

Մեղրիի մարսակետի արդիականացում և վերականգնում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

№	Բզեզների ընտանիքները և տեսակները
4	Netocia funebris
5	Epicometis suturalis
Ընտանիք Չրիսկաններ - Elateridae	
6	Cardiophorus nigratissimus
Ընտանիք Ոսկերզեզներ - Buprestidae	
7	Julodella globithorax
8	Acmaeoderella gibbulosa
9	Acmaeoderella villosula
10	Sphenoptera tschitscherini
Ընտանիք Մանրաբզեզներ - Melyridae	
11	Charopus thoracicus Mor.
12	Ebaeus bulbifer Kol.
Ընտանիք Խայտաբղետ բզեզներ - Cleridae	
13	Trichodes 4-guttatus
Ընտանիք Սևամարմիններ -Tenebrionidae	
14	Zophosis rugosa Fald.
15	Pimelia verrucosa
16	Gonocephalum rusticum
17	Dissonomus picipes
18	Opatroides punctulatus
Ընտանիք Թարախահաններ - Meloidae	
19	Cerocoma festiva
20	Mylabris fabricii
21	Mylabris cincta
22	Mylabris scabiosae
Ընտանիք Փայլաբեզներ - Nitidulidae	
23	Meligethes sp. 3
Ընտանիք Կաշվեկերներ - Dermestidae	
24	Attagenus orientalis
Ընտանիք Չատիկներ - Coccinellidae	
25	Hippodamia variegata
26	Scymnus sp.
Ընտանիք Տերևակերներ - Chrysomelidae	
27	Coptocephala gebleri
28	Coptocephala unifasciata
29	Tituboea macropus
30	Labidostomis armeniacus
31	Labidostomis elegans
32	Diorrhabda fischeri
Ընտանիք Փղիկներ - Curculionidae	
33	Ptochus circumcinctus
34	Larinus syriacus
35	Conorrhynchus lacerta
36	Leucomigus candidates

Ողնաշարավորներ - Vertebrata

Կենդանական աշխարհի տեսակային կազմը ձևավորվել է Իրանական, Անատոլական, Կովկասյան, մասամբ նաև Միջին Ասիական կենսաաշխարհագրական մարզերի ազդեցությամբ: Այդ պատճառով մասնավորապես Մեղրու տարածաշրջանի կենդանական աշխարհը բացառիկ բազմազան է: Ողնաշարավոր կենդանիներից տարածաշրջանում շատ են հանդիպում թռչնատեսակները (մոտ 21 տեսակ), որոնք ներկայացված են ստորև Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Տարածքում հանդիպող թռչունները

№	Թռչունների անվանումը	
	Լատիներեն	Հայերեն
1	Buteo rufinus	Տափաստանային ճուռակ
2	Accipiter nisus	Լորանուռակ
3	Falco tinnunculus	Սովորական հողմավար բազե
4	Egretta garzetta	Սպիտակ փոքր տառեղ
5	Alectoris chukas	Քարակաքավ
6	Alauda arvensis	Դաշտային արտույտ
7	Galerida cristata	Փուռուլավոր արտույտ
8	Hirunda rustica	Գյուղական ծիծեռնակ
9	Apus apus	Սև մանգաղաթև
10	Motacilla cinerea	Լեռնային խաղտունիկ
11	Motacilla alba	Սպիտակ խաղտունիկ
12	Saxicola ruberta	Մարգագետնային չքչքան
13	Oenanthe isabellina	Պարող քարաթռչնակ
14	Oenanthe hispanica	Սևախայտ քարաթռչնակ
15	Fringilla coelebs	Ամուրիկ
16	Emberiza melanocephala	Սևագլուխ դրախտապան
17	Turdus merula	Սև կեռնեխ
18	Sitta neumayeri	Ժայռային փոքր սիտեղ
19	Lanius minor	Սևանակատ շամփրուկ
20	Merops apiaster	Ոսկեգույն մեղվակեր
21	Upupa epops	Հոպոպ

Տարածաշրջանի հերպետոֆաունան ներկայացված է 25 տեսակներով (11 տեսակի մողեսներ, 13 տեսակի օձեր և 1 տեսակի կրիա), որոնցից կարելի է առանձնացնել. մողեսներ՝ ռադդեի ժայռային մողեսը (*Darevskia raddei*), նրբագեղ օձաչք մողեսը (*Ophisops elegans*), գոլավոր մերկաչքը (*Ablepharus bivittatus*), երկարատուն սցինկը (*Eumeces schneideri*), առաջավորասիական մաքույանը (*Trachylepis septemtaeniata*), գոլավոր մողեսը (*Lacerta strigata*), օձեր՝ անդրկովկասյան մագլցող սահնօձը (*Elaphe hohenackeri*), կովկասյան կատվածը (*Telescopus fallax*), արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*), անդրկովկասյան գյուրզան (*Vipera lebetina*), հայկական իժը (*Vipera raddei*), սովորական մողեսօձը (*Malpolon monspessulanus*), հայկական էյրենիսը (*Eirenis collaris*), որդանման կույրօձը (*Tylops vermicularis*), արևելյան քառաշերտ մագլցող սահնօձը (*Elaphe quatuorlineata*), պարսկական պսևդոցիկլոֆիսը (*Pseudocyclophis persicus*), միջերկրածովային կրիան (*Testudo graeca*): Կենդանատեսակներից որոշները ներկայացված են Նկար 10-ում:

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Մեղրու տարածաշրջանը բնութագրվում է հարուստ և զանազան ֆաունայով: Այստեղ հանդիպում են նաև վտանգված ՀՀ Կարմիր գրքում գրանցված ողնաշարավոր կենդանիներ, ինչպես նաև Արաքս գետի մերձափնյա գոտիներին բնորոշ վտանգված կենդանատեսակներ, որոնք ներկայացված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Նախատեսվող գործունեության տարածքի շրջակայքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները

№	Կենդանատեսակներ		ԲԳՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ³
	Հայերեն	Լատիներեն	
Միջատներ			
1	Ճպուռ-ձառա	<i>Crocothemis servilia</i>	EN
2	Երևանյան գիշանանճ	<i>Machimus erevanensis</i>	EN
Մողեսներ			
3	Առաջավորասիական մաբույա	<i>Trachylepis septemtaeniata</i> Reuss	VU
4	Երկարաոտ սցինկ	<i>Eumeces schneideri</i>	VU
Թռչուններ			
5	Թուրաջ	<i>Francolinus francolinus</i>	DD
6	Մուլթանական հավ	<i>Porphyrio porphyrio</i>	DD

Նկար 10. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները



³ EN (*Endangered*) - վտանգված տեսակ, VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ, DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն

Ռադդեի ժայռային մողես (*Darevskia raddei*)



Արևմտյան վիշապիկ (*Eryx jaculus*)

Գորշ բրդոտ բզեզ (*Epicometis suturalis*)



Ամուրիկ (*Fringilla coelebs*)



Հղափոր մողես (*Lacerta strigata*)



Սև կեռնկի (*Turdus merula*)

7.11.3 Ազդակիր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պատկերը և ենթակառուցվածքները

Մեղրու սահմանային արդիականացվող անցակետը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Մեղրի համայնքի վարչական սահմաններում, Ազարակ բնակավայրի հարավային մասում (տես Նկար 2-ը): Այն տեղակայված է Արաքս գետի հյուսիսային ափին ծովի մակերևույթից 534 մ բարձրության վրա և սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը: Հեռավորությունը մարզկենտրոն Կապան քաղաքից՝ 80 կմ է, Մեղրի քաղաքից՝ 10 կմ է, Երևանից՝ մոտ 400 կմ: Մեղրու անցակետից մոտ 400 մ դեպի հարավ գտնվում է Իրանի Հանրապետության անցակետը:

Անցակետի արդիականացման նախագծի իրագործումն իր դրական ազդեցությունն է ունենալու Հայաստանի և Իրանի միջև առևտրի և տնտեսական կապերի, ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման առումով, այսինքն մակրոտնտեսական առումով նախագծի ազդակիր կարելի է համարել Հայաստանի Հանրապետությունը: Տարածաշրջանային զարգացման առումով ազդակիր է Սյունիքի մարզը, իսկ հարակից համայնքների վրա ազդեցության առումով՝ Մեղրի համայնքը:

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հանրապետության հարավային մասում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց Ձորին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին:

Սյունիքի մարզի ընդհանուր տարածքը կազմում է 4,506 կմ²: Մարզը բաղկացած է 72 համայնքներից (7 քաղաքային, 127 գյուղական): 2017 թ.-ի տարեկարգի դրությամբ Սյունիքի մարզի բնակչությունը կազմել է 138.9 հազ մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 93.9 հազ. մարդ է, իսկ գյուղականը՝ 45.0 հազ մարդ: Սյունիքի մարզի քաղաքները և դրանց բնակչության թվաքանակը բերված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Սյունիքի մարզի քաղաքները և դրանց մշտական բնակչությունը

№	Քաղաքներ	Մշտական բնակչությունը 2017 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ
1	Կապան	42,571
2	Գորիս	20,398
3	Սիսիան	14,835
4	Քաջարան	7,050
5	Մեղրի	4,522
6	Ազարակ	4,258
7	Դաստակերտ	298

ՀՀ Սյունիքի մարզը, զբեղեցնելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության առումով կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով Հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման

Մեղրիի մարզակենտրոնի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

քարեր, բազալտային հունք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծությամբ (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծությամբ (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում):

Մեղրի խոշորացված համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավային մասում և կազմավորվել է 2016 թ.-ի սեպտեմբերին ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի բոլոր 13 համայնքների խոշորացման արդյունքում՝ "Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին" ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թ.-ի հունիսի 17-ի ՀՕ-100-Ն օրենքով:

Այն ընդգրկում է Մեղրի և Ագարակ քաղաքային, ինչպես նաև, Ալվանք, Այգեձոր, Գուդեմնիս, Թխկուտ, Լեհվագ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Ծվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն գյուղական բնակավայրերը:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են պտղաբուծությունը և մեղվաբուծությունը: Առավելապես տարածված է մերձարևադարձային պտուղների՝ նռան, թզի, արքայանարնջի, իսկ վերջին տարիներին նաև կիվիի և ձիթապտղի մշակությունը: Բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ Մեղրիում զարգացած է նաև գյուղատնտեսության եկամտաբեր ճյուղերից մեկը՝ մեղվաբուծությունը: 2015 թ.-ին համայնքում ընդհանուր առմամբ հաշվվել է մոտ 3784 մեղվաբնտանիք:

Համայնքում մասամբ զբաղվում են նաև անասնապահությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ: Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական սպառումն իրականացվում է Սյունիքի մարզում, Երևանում և Հայաստանի այլ մարզերում:

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման առումով բավականին բարդություն է առաջացնում ճանապարհը, որը, չնայած ասֆալտապատված է, բայց բավականին դժվար անցանելի է՝ բազմաթիվ ոլորանների պատճառով: Բերքի տեղափոխումը զգալիորեն բարձրացնում է ինքնարժեքը:

Համայնքում գործում են պահածոների և զինու գործարանները, որոնք մասամբ մթերում են արտադրվող բերքը: Վերջին տարիներին զգալիորեն ավելացել են մրգերի վերամշակման փոքր արտադրամասերը (հյութերի, մուրաբաների, չրերի արտադրություն) և սառնարանները, որոնց արտադրանքը հիմնականում վաճառվում է մեծածախ՝ Երևան քաղաքում գործող վերավաճառողներին:

Համայնքի հանքարդյունաբերությունը ներկայացված է հետևյալ արտադրական օբյեկտներով.

- "Ագարակի ՊՄԿ", ք. Ագարակ (պղնձի, մոլիբդենի խտանյութ),
- "Վարդանի գարթոնքը" ՍՊԸ, գ. Վարդանիձոր (ոսկու խտանյութ),
- "Սիփան-1" ՍՊԸ, գ. Վարդանիձոր (ոսկու խտանյութ):

Համայնքում կառուցվել է նաև 2 փոքր ՀԷԿ, որոնց արտադրված էլեկտրական էներգիան մատակարարվում է Մեղրի համայնքի կարիքների համար:

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Համայնքում գործում են նաև կահույքի, շինանյութի, հացամթերքի և հրուշակեղենի փոքր արտադրամասեր:

Համայնքում գործում է երկու նախադպրոցական և 11 հանրակրթական ուսումնական հաստատություններ: Համայնքում գործող միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը՝ Մեղրու պետական քոլեջն է, որն ունի 177 ուսանող: Քոլեջի շենքը նախատեսված է 200 ուսանողի համար:

Առողջապահական միակ հիմնարկը՝ "Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն" ՓԲԸ-ն, ստեղծվել է 2010 թվականի օգոստոսի 13-ին "Ագարակի հիվանդանոց" և "Մեղրու բժշկական կենտրոն" ՓԲԸ-ների միավորման արդյունքում: 2015 թվականին ավարտվեց Համաշխարհային Բանկի վարկային ծրագրով իրականացված բժշկական կենտրոնի նոր համալիրի կառուցումը: Բժշկական կենտրոնն իրականացնում է հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապ. օգնության ծառայություններ:

Արաքսաշեն, Լեհվագ, Վահրավար, Վարդանիձոր, Լիճք, Տաշտուն, Շվանիձոր, Ավանք, Նոնաձոր, Կարճևան, Գուղեմնիս գյուղական համայնքներում գործում են 11 բուժակ-մանկաբարձական կետեր:

Համայնքում հաշվառված է 337 նպաստառու ընտանիք և գրանցված է 349 գործազուրկ: Համայնքում գործազրկության մակարդակը նվազագույններից է Հանրապետությունում:

Մեղրու տարածաշրջանին բնորոշ գլխավոր խնդիրը տնտեսության բազմաճյուղության ցածր մակարդակն է: Տնտեսության 80%-ը պատկանում է հանքարդյունաբերությանը և համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, բնակչության կենսագործունեությունը մեծապես կախված են համաշխարհային շուկայում պղնձի, մոլիբդենի և ոսկու գներից, ինչը վտանգավոր և ռիսկային կարելի է համարել: Չնայած Մեղրիում ազատ տնտեսական գոտու ստեղծման հեռանկարների առկայությանը, մասնավոր ներդրողները շարունակում են հետաքրքրություն ցուցաբերել համայնքում հանքարդյունաբերության ոլորտի նկատմամբ: Գյուղատնտեսության, զբոսաշրջության զարգացմանը և արդյունաբերության այլ ճյուղերի ձևավորմանը միտված հեռանկարային բիզնես ծրագրեր դեռևս չեն առաջադրվել:

8. ՆԱԽԱԳԾԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախագծային փաստաթղթերի, առկա գրականության ու քարտեզների վերլուծության, դաշտային ուսումնասիրությունների իրականացման, ինչպես նաև Նախագծի շահառուների հետ քննարկումների և հանրային լուծումների անցկացման արդյունքում հատկորոշվել են այն հիմնական ռիսկերը և ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ նախատեսվող գործունեության՝ Մեղրու անցակետի վերակառուցման (շինարարության) և հետագա գործառնության ժամանակ: Այդ ռիսկերը և ազդեցությունները ամփոփված են ստորև՝ 8.1-8.4 բաժիններում, իսկ դրանք նվազեցնող և մեղմացնող բնապահպանական և սոցիալական միջոցառումները բերված են Գլուխ 9-ում:

8.1 Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա նախնական ազդեցության գնահատումը

8.1.1 Ճանապարհների ծանրաբեռնվածությունը

Մեղրու անցակետով անցնող տրանսպորտային միջոցները երթևեկում են Երևան-Իրան Մ-2 ավտոմայրուղիով: Ներկայումս, անցակետով անցում են օրական միջինում մոտ 100 մեքենա: Անցակետի վերակառուցումից հետո սպասվում է, որ Մ-2 ավտոմայրուղիով թե մարդատար և թե բեռնատար մեքենաների հոսքը աստիճանաբար պետք է ավելանա, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության և Իրան Իսլամական Հանրապետության միջև տնտեսական, սպրանքաշրջանառության և գրոսաշրջության աճի ակնկալիքներով, այդ թվում նաև անցակետի հարևանությամբ 2017 թ.-ին շահագործման հանձնված "Մեղրի" ազատ տնտեսական գոտու գործունեությամբ: Արդիականացման նախագծի համաձայն, անցակետի թողունակությունը պետք է հասնի 900 մեքենա/օր մեծության, այսինքն ակնկալվում է, որ Մ-2 ավտոմայրուղիով օրական անցնելու է մոտ 900 մեքենա: Կարելի է փաստել, որ անցակետի արդիականացումից հետո ճանապարհների ծանրաբեռնվածության առումով կդիտվի որոշակի բացասական ազդեցություն:

Վերակառուցման աշխատանքների (շինարարության) փուլում որոշ չափով կաճի նաև բեռնատար մեքենաների հոսքը Մ-2 մայրուղու Մեղրի համայնք - անցակետ հատվածում, ինչը պայմանավորված է մի կողմից նախատեսվող գործունեության տարածք շինարարական նյութերի, այդ թվում նաև գրունտի/լիցքի, իսկ մյուս կողմից անցակետի տարածքից դեպի Մեղրու աղբավայր շինարարական աղբի և "Չանգեգուր" կենսոլորտային համալիր հողի բերրի շերտի (տես նաև [բաժին 8.1.5-ը](#)) տեղափոխման աշխատանքներով: Հետևաբար, ճանապարհների ծանրաբեռնվածության տեսանկյունից շինարարական աշխատանքների ազդեցությունը բացասական է, սակայն կարճաժամկետ է և կարող է մեղմացվել համապատասխան միջոցառումների իրականացման արդյունքում (տես [Գլուխ 9-ը](#)):

- Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող բեռնատար մեքենաներ,
- Կատարել ավտոմայրուղու Մեղրի համայնք - անցակետ հատվածում տրասպորտային հոսքերի ուսումնասիրություն և շին. նյութերի ու թափոնների փոխադրումը իրականացնել օրվա չծանրաբեռնված ժամերին,
- Շինարարության ընթացքում սահմանափակել Մեղրի համայնք - անցակետ հատվածում բեռնատար մեքենաների արագությունը, տեղադրել համապատասխան նախագուշացնող նշաններ:

8.1.2 Մթնոլորտային օդի աղտոտումը

Ներկայումս, անցակետի գործունեությունից վնասակար նյութերի արտանետումների հիմնական աղբյուրներն են սահմանը հատող տրանսպորտային միջոցները, իսկ արտանետումների բաղադրիչներն են՝ ածխածնի օքսիդը, ազոտի օքսիդները, ծծմբի անհիդրիդը, ածխաջրածինները, պինդ մասնիկները: Ինչպես նշված է [բաժին 8.1.1-ում](#), արդիականացումից հետո՝ զգալիորեն աճելու է Մեղրու անցակետով անցնող տրանսպորտային միջոցների հոսքը, ինչը կհանգեցնի վերոնշյալ զազային արտանետումների ավելացմանը: Այսինքն, կարելի է փաստել, որ անցակետի արդիականացումից հետո, զազային արտանետումների քանակը աստիճանաբար աճելու է՝ մինչև որ կհասնի նախագծային ցուցանիշներին (900 մեքենա/օր) համապատասխանող արժեքներին: Մյուս կողմից, Մեղրու անցակետի արդիականացման նախագիծը ենթադրում է շենքերի և շինությունների պատերի ու տանիքների ջերմամեկուսացում, արդիական ջեռուցման համակարգերի կիրառում և այլ էներգաարդյունավետ միջոցառումներ, ինչը մթնոլորտային օդի վրա

անուղղակի ներգործության տեսանկյունից դիտվում է որպես դրական և որոշ չափով մեղմացնում է մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը:

Անցակետի վերակառուցման փուլում՝ Մ-2 մայրուղու Մեղրի համայնք - անցակետ հատվածում բեռնատար մեքենաների հոսքի աճով և բուն նախատեսվող գործունեության տարածքում՝ շին. տեխնիկայի աշխատանքով պայմանավորված, կդիտվեն վերոնշյալ վնասակար նյութերի լրացուցիչ արտանետումներ: Շինարարական աշխատանքների ժամանակ մթնոլորտն աղտոտող վերոնշյալ վնասակար նյութերին կավելանան նաև փոշու արտանետումները, որոնք նախատեսված մեծածավալ հողային և շինարարական աշխատանքների արդյունք են: Սակայն, փոշու, ինչպես նաև շին. տեխնիկայից արտանետումները կարելի է նվազեցնել համապատասխան մեղմացնող միջոցառումների միջոցով՝

- Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող բեռնատար մեքենաներ,
- Սորուն նյութեր տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքը պահել ծածկված վիճակում,
- Սորուն նյութերը արդ. հրապարակում պահել ծածկված անջրաթափանց թաղանթով,
- Արդ. հրապարակը, հատկապես հողային աշխատանքների ժամանակ, պարբերաբար ենթարկել ջրցանի,
- Շին. հրապարակ բեռնատար մեքենաների մուտքի և ելքի ժամանակ անիվների ջրում,
- Արգելել արդ. հրապարակում շինարարական նյութերի և թափոնների այրումը:

8.1.3 Աղմուկի և թրթռման ազդեցությունը

Ներկայումս, գործող անցակետի տարածքում աղմուկի ֆոնային մակարդակը ձևավորվում է մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցների երթևեկությունից, անցակետի սարքավորումների և ենթակառուցվածքների (պոմպակայան, օդափոխության համակարգ և այլն) աշխատանքից և այլ մարդածին գործունեությունից: Ակնկալվում է, որ տրանսպորտային միջոցների հոսքի հետագա աճը (տես **բաժին 8.1.1-ը**) կարող է բերել անցակետի տարածքում և շրջակայքում աղմուկի համարժեք (միջին) մակարդակի բարձացմանը, որը սակայն չի հանգեցնի ֆոնային աղմուկի՝ ՀՀ սահմնարարական նորմերով սահմանված թույլատրելի մակարդակի գերազանցմանը, հաշվի առնելով նաև, որ աշխատանքային նախագծով նախատեսված են մի շարք աղմկամեղմիչ միջոցառումներ: Թրթռման արձակումներ անցակետի գործունեությունից չեն սպասվում:

Հնարավոր է աղմուկի մակարդակի որոշակի բարձրացում անցակետի արդիականացման և հատկապես հողային և շինարարական աշխատանքների ընթացքում: Աղմուկի մակարդակի բարձրացում կդիտվի նաև Մ-2 ավտոմայրուղու երկայնքով, հիմնականում Մեղրի-Ագարակ հատվածում՝ պայմանավորված շինարարական և այլ նյութերի փոխադրման աշխատանքներով, որը կարելի է նվազեցնել հետևյալ միջոցառումների միջոցով՝

- Դադարեցնել տրանսպորտային միջոցների և շին. տեխնիկայի աշխատանքը գիշերային ժամերին,
- Նվազեցնել բեռնատար մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակավայրերում,
- Աղմուկ առաջացնող գործունեությունն ծավալելուց առնվազն 24 ժամ առաջ զգուշացնել շրջակա բնակչությանը:

8.1.4 Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա

Մեղրու անցակետի խմելու ջրի մատակարարումը իրականացվում է արտեզիան հորից՝ մոտ 30 մ խորությունից: Ջրամատակարարումը ավելի հուսալի դարձնելու նպատակով, աշխատանքային նախագծով նախատեսվում է նույն խորությամբ ևս մեկ արտեզիան հորի հորատում, որի դեպքում կապալառուն պետք է նախաձեռնի «Ջ» ջրային օրենսգրքի համաձայն ջրօգտագործման թույլտվություն ստանալու գործընթացը: Որպես այլընտրանքային տարբերակ դիտարկվում է նաև Մեղրու քաղաքային ցանցից անցակետի ջրամատակարարումը:

Ներկայումս, անցակետի կեղտաջրերը ուղղվում են դեպի Արաքս գետ: Աշխատանքային նախագծով նախատեսվում է $15.0 \text{ մ}^3/\text{օր}$ արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրերի մաքրման կոմպակտ կայանի տեղադրում: Մաքրման կայանում կատարվելու է կեղտաջրերի եռաստիճան մաքրում, ներառյալ կենսաբանական մաքրումը, որից հետո մաքրված ջրերը ուղղվելու են գետ կամ լճվելու են ջրամբար՝ հետագայում ոռոգման նպատակով օգտագործելու համար: Մաքրման կայանը ապահովելու է մաքրված կեղտաջրերում Թ-ԿՊ ՝ 10-20 մգ/լ սահմաններում, Թ-ՔՊ ՝ 70-100 մգ/լ, N և NH_4 իոնների պարունակություն՝ 15-20 մգ/լ: Այսպիսով, արդիականացված անցակետում խմելու տնտեսական ջրի ծախսը կավելանա, սակայն, հաշվի առնելով, որ առաջացող կեղտաջրերը ենթարկվելու են մաքրման, որից հետո հաջորդաբար օգտագործվելու ոռոգման նպատակով, կարելի է փաստել, որ ջրային ռեսուրսների վրա ներգործության տեսանկյունից նախագծի իրագործումը դրական է:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նաև անձրևաջրերի կոյուղու համակարգ, որտեղից ջուրը նույնպես ուղղվելու է մաքրման կայան և մաքրումից հետո օգտագործվելու ոռոգման նպատակով:

Վերակառուցման (շինարարական) փուլում, հատկապես Արաքս գետի հունով կառուցվող հենապատի և մոտ $230,000 \text{ մ}^2$ գրունտի լիցքի ժամանակ (տես նաև [բաժին 8.1.5-ը](#)), հնարավոր է գետի տվյալ հատվածում ջրի որակի վրա բացասական ազդեցություն՝ պայմանավորված հողային աշխատանքներից առաջացած փոշու մասնիկների նստեցմամբ: Այս ազդեցությունը կարճաժամկետ է և կարող է մեղմացվել հետևյալ միջոցառումների իրականացմամբ՝

- Քամոտ և անձրևային եղանակներին հողային աշխատանքների դադարեցում՝ Արաքս գետի հունով համապատասխան հենապատի կառուցման ընթացքում,
- Արդ.հրապարակը պարբերաբար ենթարկել ջրցանի,
- Արտեզիան հորից ջրի օգտագործման համար ստանալ լիազոր մարմնի ջրօգտագործման թույլտվությունը,
- Անցակետի շահագործման փուլում ապահովել մաքրման կայանի անխափան աշխատանքը:

8.1.5 Ազդեցություն հողային ռեսուրսների վրա

Ինչպես արդեն նշվել է, աշխատանքային նախագծով նախատեսվում է գործող անցակետի ընդլայնում հարավային ուղղությամբ, ինչը ենթադրում է Մեղրի համայնքից մոտ 2.3 հա հողատարածքի ձեռք բերում: Այդ հողակտորը տեղակայված է Արաքս գետի մերձափնյա հատվածում՝ գործող ճանապարհային ցանցից 5-6 մ ցածր նիշի վրա: Նշված տարածքը շահագործման համար պիտանի դարձնելու նպատակով անհրաժեշտ է կատարել գրունտի (4-րդ կարգի բնահող) լիցք մոտ $230,000 \text{ մ}^2$ ծավալով՝ Արաքս գետի հունով համապատասխան հենապատի կառուցմամբ: Նշված աշխատանքներին կնախորդեն վերոնշյալ տարածքից մոտ $30,000 \text{ մ}^3$ ծավալով բուսահողի շերտի հեռացումը և ժամանակավորապես պահումը՝ Մեղրի համայնքի ղեկավարի կողմից հատկացված

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

վայրում (տես Հավելված 4-ը), որը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքից 1.4 կմ հեռավորության վրա: Նշված աշխատանքները պետք է իրականացնել առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով, մասնավորապես՝

- Բուսահողի շերտը պահել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,
- Բուսահողը հանելու, պահեստավորելու և պահելու ընթացքում բացառել դրա որակական հատկանիշների վատթարացումը,
- Աշխատանքների ավարտից հետո իրականացնել անցակետի տարածքի բարեկարգում՝ կիրառելով հանված բուսահողը:

Որպես լիցքի գրունտ նախատեսվում է օգտագործել "Մեղրի" ազատ տնտեսական գոտու ընդլայնման ծրագրով նախատեսված հարևան տարածքների հարթեցման արդյունքում առաջացած հողը: Այս լուծումը առաջարկվել է Մեղրի համայնքի ղեկավարի կողմից (Հավելված 4): Այն բավականին արդյունավետ է, քանի որ համալիր մոտեցում է առաջարկում, թե Մեղրու ԱՏԳ ընդլայնման և, թե անցակետի արդիականացման ծրագրերի/նախագծերի հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցությունների մեղմացման համար: Գրունտի արտավորման, տեղափոխման և լցման աշխատանքների ընթացքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները՝

- Գրունտը տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքի պահել ծածկված վիճակում,
- Հողային աշխատանքներ կատարելիս արդ.հրապարակը պարբերաբար ենթարկել ջրցանման,
- Քամոտ և անձրևային եղանակներին հողային աշխատանքների դադարեցում՝ Արաքս գետի հունով համապատասխան հենապատի կառուցման ընթացքում:

Անցակետի վերակառուցման փուլում հնարավոր է նաև հողի աղտոտում պայմանավորված նախատեսվող գործունեության տարածքում տրանսպորտային միջոցներից և շին.տեխնիկայից նավթամթերքների վթարային արտահոսքերով և այլ քիմիական նյութերի թափվածքներով: Այդ ռիսկերը նվազեցնելու կամ մեղմացնելու նպատակով առաջարկվում է տրանսպորտային միջոցների լիցքավորումը կատարել լցակայաններում՝ կտրոնային համակարգով, իսկ շին.տեխնիկայի լիցքավորումը իրականացնել յուղահավաք տակդիրներով կահավորված վայրերում: Հնարավոր վթարային արտահոսքերը արագ տեղայնացնելու նպատակով արդ. հրապարակում նախատեսվելու են համապատասխան միջոցներ (բահ, սորբենտ, պարկեր, կոնտեյներ):

8.1.6 Թափոնների առաջացման հետ պայմանավորված ազդեցությունները

Մեղրու անցակետի բնականոն աշխատանքի դեպքում առաջացող թափոնները հիմնականում ներկայացված են կենցաղային աղբով (ծածկագիր 91200400 01 00 4): Արդիականացման աշխատանքներից հետո, թե անցակետի սպասարկման անձնակազմի և թե սահմանը հատող անձանց ավելացման արդյունքում կանեն առաջացող կենցաղային թափոնների ծավալները, սակայն դա չի հանգեցնի բացասական ռիսկերի, քանի որ աղբը համայնքային սանիտարական սպասարկման ծառայության կողմից պարբերաբար հեռացվելու է անցակետի տարածքից և տեղադրվելու Ազարակի աղբավայրում (գտնվում է անցակետից 4 մ հեռավորության վրա):

Անցակետի վերակառուցման փուլում հիմնականում կառաջանան շինարարական աղբ (ծածկագիր 91200601 01 00 4), սև և գունավոր մետաղների ջարդոն (ծածկագրեր 35131100 01 00 4, 35310105 01 99 5, 35310305 01 01 3), պոլիէթիլենի թափոններ (ծածկագիր՝ 57102903 13 99 5), յուղոտված հնոտի (ծածկագիր՝ 58200600 1 01 4) և այլն: Մեղրու համայնքի ղեկավարի առաջարկով բոլոր վերոնշյալ թափոնները, բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնից, տեղադրվելու

են Ազարակի աղբավայրում (Հավելված 4): Բնապահպանական տեսանկյունից, շինարարության ժամանակ թափոնների առաջացումը դիտարկվում է որպես բացասական ազդեցություն, սակայն այն կրելու է ժամանակավոր բնույթ, իսկ դրա ազդեցությունը կարելի է մեղմացնել համապատասխան միջոցառումների կիրառմամբ՝

- Շինարարության փուլում նախատեսել արդ.հրապարակում վերոնշյալ թափոնների համար առանձին պահման կոնտեյներներ՝ համապատասխան նշագրմամբ,
- Շինարարական աշխատանքների ավարտին առաջացած սև և գունավոր մետաղների ջարդոնը հանձնել մասնագիտացված ընկերություններին,
- Կազմակերպել շինարարական ու կենցաղային աղբի պարբերաբար հեռացումը արդ.հրապարակից՝ համայնքային սանիտարական սպասարկման ծառայության կողմից:
- Անցակետի շահագործման փուլում տեղադրել տարածքում բավարար քանակությամբ աղբամաններ, կազմակերպել դրանց պարբերաբար բեռնաթափումը և հեռացումը աղբավայր:

8.1.7 Ազդեցությունը կենսաբազմազանության վրա

Մեղրու անցակետի ներկայիս տարածքը (6.2 հա) գործնականում զուրկ է վայրի կենսատեսակներից, քանի որ երկար տարիների ընթացքում գտնվում է մարդածին գործոնների ազդեցության տակ: Մարդածին գործոնությունն որոշակիորեն իր ազդեցությունն է թողել նաև ձեռք բերման ենթակա Արաքս գետի մերձափնյա տարածքի (2.44 հա) կենսաբազմազանության և հատկապես կենդանական աշխարհի վրա: Դրանց մեծ մասը արդեն իսկ վերաբնակվել է մարդածին ազդեցությունից զուրկ շրջակա տարածքներում:

Տարածաշրջանում կարող են հանդիպել ՀՀ կարմիր գրքում ներառված 6 կենդանատեսակներ, որոնցից 2 թռչուն են (*Francolinus francolinus*, *Porphyrio porphyrio*), 2 միջատ (*Crocotthemis servilia*, *Machimus erevanensis*) և 2 մողես (*Trachylepis septemtaeniata* Reuss, *Eumeces schneideri*): Նույնիսկ էթն որոշակի տեսակներ դեռևս բնակվում են անցակետի ընդլայնման տարածքում, ապա հաշվի առնելով նախատեսվող գործունեության ոչ մեծ տարածքը, ինչպես նաև նախապատրաստական աշխատանքների ընթացքը, դրանք կկարողանան վերաբնակվել նմանատիպ կլիմայական պայմաններ ունեցող մոտակա մերձափնյա գոտիներում և գործնական չեն ազդվի կառուցման/վերակառուցման աշխատանքների արդյունքում:

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի կողմից իրականացված կենսաբազմազանության ուսումնասիրության (Հավելված 8) արդյունքների համաձայն, տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Բույսերի Կարմիր գրքում (2010) գրանցված բուսատեսակներ: Այսինքն իրավական տեսանկյունից ուսումնասիրված տարածքի օգտագործման դեմ առարկություն չի կարող լինել: Սակայն, հաշվի առնելով այստեղ ներկայացված էկոհամակարգի հազվագյուտ լինելը և այդ էկոհամակարգի էդիֆիկատոր տեսակի (եփրատյան բարդի) սահմանափակ ներկայացվածությունը հանրապետության տարածքում, խորհուրդ է տրվել շինարարությունից առաջ այս տարածքի մոտակայքում ստեղծել տնկարան, որտեղ կտրոնավորման եղանակով հնարավոր կլինի բազմացնել եփրատյան բարդու լավ առանձնյակները և հետագայում համալրել այս էկոհամակարգը նոր բույսերով՝ Մեղրիի տարածաշրջանում, Արաքս գետի երկայնքով:

8.1.8 Աշխատանքի անվտանգության ռիսկերը

Մեղրու անցակետի վերակառուցման աշխատանքները ուղեկցվելու են արդ. հրապարակում մեծաքանակ տրասնսպորտային միջոցների և շին. տեխնիկայի միաժամանակյա շահագործմամբ, ինչպես նաև տարատեսակ վտանգավոր, մասնավորապես՝ կրակային, սահմանափակ տարածքներում և բարձրության վրա աշխատանքներով, որոնք կարող են առաջացնել հետևյալ արտակարգ իրավիճակները՝

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

- 1) Բռնկումների և հրդեհների առաջացումը
- 2) Հեղուկ նյութերի արտահոսքերը
- 3) Աշխատողների վնասվածքները
- 4) Սանիտարա-հիգիենիկ պայմանների խախտումը
- 5) Շահագործվող տեխնիկայի վթարները:

Նշված արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների մեկնարկը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը,
- Մինչ աշխատանքների մեկնարկը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչներով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում,
- Աշխատողների համար սանիտարական պայմանների, ներառյալ ցնցուղարանների, պետքարանների, հանդերձարանների և հանգստի սենյակների ապահովում,
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում կտեղափոխեն Մեղրու բժշկական կենտրոն:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկերը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

8.2 Համայնքի/տարածաշրջանի վրա նախատեսվող գործունեության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը

Անցակետի արդիականացման նախագիծը դրական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման, ինչպես նաև տարածաշրջանի և ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական միջավայրի տեսանկյունից:

Մեղրու անցման կետը ՀՀ և Իրանի Իսլամական Հանրապետության միջև գործող միակ սահմանային անցակետն է, այն կարևորագույն նշանակություն ունի երկու երկրների միջև տնտեսական համագործակցության, բեռնա- և ուղևորափոխադրումների ապահովման տեսանկյունից: Այդ իսկ պատճառով անցակետի արդիականացման նախագիծը խիստ կարևորություն ունի Հանրապետության և հատկապես Մյունիքի մարզի համար:

Ազդակիր համայնքի զարգացման տեսանկյունից նախատեսվող գործունեության իրականացումը կնպաստի Մեղրու տարածաշրջանում զբոսաշրջության և հարակից ճյուղերի զարգացմանը: Նախագծի իրականացումը համահունչ է Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրի դրույթներին:

Նախագիծը կարևոր է նաև նոր աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից: Անցակետի արդիականացման աշխատանքների ընթացքում համայնքի բնակիչների համար կստեղծվեն ժամանակավոր աշխատատեղեր հատկապես ցածր և միջին որակավորում պահանջող հաստիքների մասով: Բացի այդ, անցակետի տարածքի և գործառնությունների ընդլայնման արդյունքում կստեղծվեն սպասարկող անձնակազմի հաստիքներ, որոնք կարող են լրացվել համայնքի բնակչության հաշվին:

8.3 Աղեցությունը հարակից բնակավայրերի, օբյեկտների և ենթակառուցվածքների վրա

Մեղրու անցակետի մոտակա բնակավայրը Ագարակ քաղաքն է (հեռավորությունը անցակետից մինչև մոտակա բնակելի գոտի մոտ 1 կմ է): Արդիականացման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են ժամանակավոր աղեցություններ աղմուկի և փոշու տեսքով: Մյուս կողմից, վերակառուցված անցակետով ուղևորահոսքի մեծացման շնորհիվ Ագարակ համայնքում ակնկալվում է սպասարկման ոլորտի ծառայությունների պահանջարկի զգալի աճ, ինչը կհանգեցնի նշված ոլորտի աշխուժացմանը: Նույն տեղեկնցը կարելի է ակնկալել Մեղրի համայնքի համար: Միևնույն ժամանակ վերոնշյալ համայնքներում կարելի է ակնկալել նաև սպասարկման ոլորտի գործող օբյեկտների շրջանառության աճ:

Տեղային բնույթով պայմանավորված՝ Մեղրի անցակետի վերակառուցման աշխատանքները հարակից բիզնես և հանրային օբյեկտների վրա վնասակար ներգործություն չեն ունենա:

Անցակետի արդիականացման նախագծի շրջանակներում ձեռք բերվող հողակտորում (Արաքս գետի ափին) գտնվում է «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ արտադրական ջրամատակարարման մոտ 80%-ը և Կարճևան գյուղի ոռոգման ջրամատակարարումն սպահովող պոմպակայանները: Անցակետի արդիականացման աշխատանքների մեկնարկից հետո պոմպակայանի շահագործումը պետք է դադարեցվի, ինչը կարող է լուրջ աղեցություն ունենալ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ գործունեության, ինչպես նաև Կարճևան գյուղի բնակչության վրա:

2018թ.-ի մարտի 5-ի թիվ 04/18-3/10487-18 գրությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) դիմել է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեին (ՉՏՊԿ) Մեղրու անցակետի ընդլայնման տարածքից Կարճևան համայնքի ոռոգման պոմպակայանը և ջրատարը տեղափոխելու վերաբերյալ: Պատասխան գրությամբ ՉՏՊԿ՝ պոմպակայանը և ջրագիծը շահագործող "Սյունիք" ջրօգտագործողների ընկերության հետ խորհրդակցելով, առաջարկել է պոմպակայանը տեղափոխել Մեղրի անցակետի մուտքից 100-200 մ դեպի արևելք, իսկ նոր ջրագիծը կառուցել անցակետից դեպքի Ագարակ տանող ճանապարհին գուգահեռ, այն միացնելով այդ պոմպակայանի սպասարկման տարածքի ներկայիս գործող համակարգին (ՉՏՊԿ գրությունը կցված է, Հավելված 5): Առաջարկը ընդունվել է ՊԵԿ-ի կողմից: Պոմպակայանի և ջրագծի սպամոնտաժման և մոնտաժման աշխատանքները ֆինանսավորվելու են Նախագծի բյուջեից:

ՀՀ ՊԵԿ-ի, Մեղրի համայնքի և "Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ-ի միջև կնքվել է համաձայնության հուշագիր (Հավելված 6), համաձայն որի՝

1. ՊԵԿ-ը պարտավորվում է ապահովել մաքսատան ընդլայնման տարածքում գտնվող և "Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ-ին պատկանող արտադրական նշանակության հողամասի վրա կառուցված 3 խորքային հորերի, պոմպակայանի և դրանք սնուցող ենթակայանի սպամոնտաժման և Կոմբինատի կողմից նախանշված նոր տարածքում կառուցման աշխատանքների կատարումը, պայմանով, որ նոր կառուցվող խորքային հորերից ստացվող ջրաքանակը առնվազն պետք է հավասար լինի այսօրվա քանակներին:

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

2. Կոմբինատը և Մեղրու համայնքապետարանը համաձայնվում են մաքսակետի ընդլայնվող տարածքում գտնվող Կոմբինատի սեփականության իրավունքով տարածքները փոխանակել Մեղրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1,9355 հա խորքային հորերի, պոմպակայանի և ենթակայանի կառուցման համար տարածքով:
3. ՊԷԿ-ը և Մեղրի համայնքը համաձայնվում են նախատեսվող ընդլայնվող 2,44 հա տարածքը սահմանված կարգով օտարեն ՊԷԿ-ին:

Անցակետի վերակառուցման արդյունքում զգալիորեն ավելանալու է դրա թողունակությունը ուղևորատար և բեռնատար տրանսպորտի համար, ինչը կհանգեցնի համայնքի տարածքով անցնող ճանապարհների, մասնավորապես Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրան (Մ2) միջպետական ավտոմոբիլային ճանապարհի բեռնվածության աճին: Արդիականացված անցակետը շահագործմանը հանձնելուց հետո պետք է լուրջ ուշադրություն դարձնել, հատկապես բնակավայրերի տարածքով, ճանապարհային երթևեկության պատշաճ կառավարմանը: Միևնույն ժամանակ, նախատեսվող գործունեության իրականացմանը զուգահեռ նախատեսվում է իրականացնել Մ2 մայրուղու Մեղրու տարածաշրջանով անցնող հատվածի հիմնանորոգում, ինչը դրական ազդեցություն կթողնի Մեղրի համայնքում ենթակառուցվածքների զարգացման վրա:

"Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ 3 խորքային հորերի, պոմպակայանի և էլեկտրական ենթակայանի ապամոնտաժման և նորի կառուցման աշխատանքները կատարվելու են առանձին նախագծերի հիման վրա: Մեղրիի մաքսակետի արդիականացման և վերակառուցման նախագծում այդ աշխատանքները ներառված չեն:

8.4 Հողօգտագործումը և հողի օտարումը

Համաձայն նախագծային փաստաթղթերի, Մեղրու արդիականացված անցակետի տարածքը կազմելու է 8.64 հա, որից մոտ 6.2 հա գործող անցակետի տարածքն է, ևս 2.44 հա ձեռք է բերվելու Մեղրու համայնքապետարանից: Հողերի օտարման և ձեռք բերման կարգավորումները ներկայացված են ՀՀ ՊԵԿ-ի, Մեղրի համայնքի և "Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ-ի միջև կնքվել է համաձայնության հուշագրում (Հավելված 6): Ելնելով վերը նշվածից, կարելի է փաստել, որ նախատեսված գործունեության տարածքում հողերի հարկադրական օտարում չի նախատեսվում:

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Գրուխ 8-ում նկարագրված և վերլուծված շրջակա միջավայրի վրա և սոցիալական բնույթի ակնկալվող ռիսկերը/ազդեցությունները և դրանք նվազեցնող և մեղմացնող միջոցառումները ամփոփված են ստորև Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Բնապահպանական և սոցիալական միջոցառումների ծրագիր

Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
1. Ճանապարհների ծանրաբեռնվածությունը	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար գննվող բեռնատար մեքենաներ, • Կատարել ավտոմայրուղու Մեղրի համայնք - անցակետ հատվածում 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
	<p>տրասպորտային հոսքերի ուսումնասիրություն և շին. նյութերի ու թափոնների փոխադրումը իրականացնել օրվա չձանրաբեռնված ժամերին,</p> <ul style="list-style-type: none"> • Շինարարության ընթացքում սահմանափակել Մեղրի համայնք -անցակետ հատվածում բեռնատար մեքենաների արագությունը, տեղադրել համապատասխան նախագրուշացնող նշաններ: 			
2. Մթնոլորտային օդի աղտոտումը	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար գննվող բեռնատար մեքենաներ, • Սորուն նյութեր տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքը պահել ծածկված վիճակում, • Սորուն նյութերը արդ.հրապարակում պահել ծածկված անջրաթափանց թաղանթով, • Արդ.հրապարակը, հատկապես հողային աշխատանքների ժամանակ, պարբերաբար ենթարկել ջրցանի, • Շին.հրապարակ բեռնատար մեքենաների մուտքի և ելքի ժամանակ անիվների ջրում, • Արգելել արդ.հրապարակում շինարարական նյութերի և թափոնների այրումը: 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
3. Աղմուկը և թրթռումը	<ul style="list-style-type: none"> • Դադարեցնել տրասպորտային միջոցների և շին.տեխնիկայի աշխատանքը գիշերային ժամերին, • Նվազեցնել բեռնատար մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակավայրերում, • Աղմուկ առաջացնող գործունեություն ծավալելուց առնվազն 24 ժամ առաջ զգուշացնել շրջակա բնակչությանը 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
4. Ջրային ռեսուրսները	<ul style="list-style-type: none"> • Քամոտ և անձրևային եղանակներին հողային աշխատանքների դադարեցում՝ Արաքս գետի հունով համապատասխան հենապատի կառուցման ընթացքում, • Արդ.հրապարակը պարբերաբար ենթարկել ջրցանի, • Արտեզիան հորից ջրի օգտագործման համար ստանալ լիազոր մարմնի ջրօգտագործման թույլտվությունը, • Անցակետի շահագործման փուլում 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
	ապահովել մաքրման կայանի անխափան աշխատանքը:			
5. Հողային ռեսուրսները (բուսահողի շերտ)	<ul style="list-style-type: none"> • Բուսահողի շերտը պահել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը, • Բուսահողը հանելու, պահեստավորելու և պահելու ընթացքում բացառել դրա որակական հատկանիշների վատթարացումը, • Աշխատանքների ավարտից հետո իրականացնել անցակետի տարածքի բարեկարգում՝ կիրառելով հանված բուսահողը: 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
6. Հողային ռեսուրսները (գրունտ)	<ul style="list-style-type: none"> • Գրունտը տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքի պահել ծածկված վիճակում, • Հողային աշխատանքներ կատարելիս արդ.հրապարակը պարբերաբար ենթարկել ջրցանի, • Քամոտ և անձրևային եղանակներին հողային աշխատանքների դադարեցում՝ Արաքս գետի հունով համապատասխան հենապատի կառուցման ընթացքում: 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
7. Թափոնների առաջացումը	<ul style="list-style-type: none"> • Շինարարության փուլում նախատեսել արդ.հրապարակում վերոնշյալ թափոնների համար առանձին պահման կոնտեյներներ՝ համապատասխան նշագրմամբ, • Շինարարական աշխատանքների ավարտին առաջացած սև և գունավոր մետաղների ջարդոնը հանձնել մասնագիտացված ընկերություններին, • Կազմակերպել շինարարական ու կենցաղային աղբի պարբերաբար հեռացումը արդ.հրապարակից՝ համայնքային սանիտարական սպասարկման ծառայության կողմից, • Անցակետի շահագործման փուլում տեղադրել տարածքում բավարար քանակությամբ աղբամաններ, կազմակերպել դրանց պարբերաբար բեռնաթափումը և հեռացումը աղբավայր: 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
7. Կենսաբազմազանությունը	<ul style="list-style-type: none"> • Շինարարությունից առաջ նախատեսվող գործունեության տարածքի մոտակայքում ստեղծել տնկարան, որտեղ կտրոնավորման եղանակով հնարավոր կլինի 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ

Մեղրիի մաքսակետի արդիականացում և վերակառուցում

ՇՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ


Շրջակա միջավայրի հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
	<p>բազմացնել եփրատյան բարդու լավ առանձնյակները և հետագայում համարել այս էկոհամակարգը նոր բույսերով՝ Մեղրիի տարածաշրջանում, Արաքս գետի երկայնքով,</p> <ul style="list-style-type: none"> Իրականացնել հարակից տարածքների բուսական տեսակների, անելավայրերի, պուպուլյացիաների վիճակի փոփոխության մշտադիտարկում, «Ալլեգրա տրանս» ՄՊԸ-ի նախկինում վարձակալված տարածքում տնկված ծառերը վերատնկվել Մեղրու մաքսակետի այլ կանաչապատ գոտիներում: 			
8. Աշխատանքային միջավայրը	<ul style="list-style-type: none"> Աշխատանքի անվտանգության գծով հրահանգավորում աշխատողների հետ, Աշխատանքների սանիտարական պայմանների, ներառյալ ցնցուղարանների, պետքարանների և հանդերձարանների պատշաճ պահպանում, Աշխատողների ապահովում անհատական պաշտպանության միջոցներով՝ հատուկ արտահագուստով, կոշիկներով, դիմակներով, ակնոցներով, ձեռնոցներով և այլն, Առաջին բուժօգնության դեղորայքի ապահովում, Առաջնային հրդեհաշիջման միջոցներով ապահովում: 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
9. Վթարները	<ul style="list-style-type: none"> Շինարարական տեխնիկայի շահագործման պատշաճ կառավարում, Շրջակա բուժկենտրոնների նույնականացում՝ վնասվածք ստացած աշխատողներին հրատապ բուժօգնություն ցուցաբերելու համար, Բեռնատար մեքենաների վարորդների հրահանգավորում՝ սահմանված երթուղիներին և արագությանը համապատասխանեցնելու համար, Վարորդների առողջության բուժ. գնում: 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
10. Աղբեցություն բնակավայրերի, օբյեկտների և ենթակառուցվածքների վրա	<ul style="list-style-type: none"> Համապատասխան գործողությունները ներառված են սույն Բնապահպանական և սոցիալական միջոցառումների ծրագրի 1, 2, 3, 5 և 6 կետերում: 	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշմամբ հաստատված "Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը":
2. ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն որոշմամբ հաստատված "Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը":
3. ՀՀ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշմամբ հաստատված "Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստային գնահատման կարգը. տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները":
4. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ. EMEP/EEA. 2009:
5. Հայաստանի Ազգային Ատլաս. Երևան. 2007:
6. Հայաստանի բնաշխարհ. 2006:
7. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր. 2002:
8. Հայաստանի կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց. 1999:
9. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
10. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
11. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
12. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет. Ленинград. 1986.
13. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности. Стройиздат. Москва. 1982.
14. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов. МИНПРОМСТРОЙ СССР. Москва 1984.
15. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
16. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
17. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող կյուբերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
18. ՀՀ Կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի "Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին" թիվ 75-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

GENERAL PLAN VIEW M1:1000
 ՔԱՆԱԿՈՂ ՎՃԱՌԱՎՈՒՄՈՒ Մ1:1000



ՇՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
 SCHEDULE OF BUILDINGS AND STRUCTURES

- 1 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 2 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 3 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 4 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 5 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 6 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 7 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 8 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 9 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 10 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 11 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 12 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 13 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 14 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 15 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 16 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 17 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 18 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 19 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 20 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 21 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 22 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 23 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 24 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 25 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 26 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 27 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 28 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 29 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 30 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 31 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 32 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 33 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 34 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 35 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 36 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 37 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 38 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 39 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 40 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ
- 41 ԾՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՍԻՍՏՆԱԿՆԵՐ

Modernization of the Meghri Border Crossing Point in the Republic of Armenia ՀԱ Լճրդղի Ամենայնի Աղյուսը կարծախմբագրույալ			
Project Name	Ճարտ.	Տվյալ	Ճարտ. ընկերություն
GENERAL PLAN VIEW		ՔԱՆԱԿՈՂ ՎՃԱՌԱՎՈՒՄՈՒ	
Scale	Մասշտաբ	Ճեռ	Ճեռ
Sheet No.	Ճեռ. N.Ո.	Բլ.	Ճեռ. թիվ
GENERAL PLAN VIEW	ՔԱՆԱԿՈՂ ՎՃԱՌԱՎՈՒՄՈՒ	Page	Գրքի
GENERAL PLAN VIEW	ՔԱՆԱԿՈՂ ՎՃԱՌԱՎՈՒՄՈՒ	2	28
GENERAL PLAN VIEW M1:1000	ՔԱՆԱԿՈՂ ՎՃԱՌԱՎՈՒՄՈՒ Մ1:1000	PD	ՓՊ
PROJECT COORDINATOR			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37 meghri.syuniq@mta.gov.am

"ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊՐՆ. Վ. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան,

Ի կատարումն "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի հոդված 16-ի, ինչպես նաև հիմնվելով 14.11.2017թ.-ին տեղի ունեցած «Մեղրու անցակետի արդիականացում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների արդյունքների վրա, իմ նախնական համաձայնություն եմ տալիս վերոնշյալ նախագծի իրականացմանը:

Հարգանքով՝

Համայնքի ղեկավար՝

Մխիթար Զաքարյան



20217թ. դեկտեմբերի 12
ք.Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք

ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 2-23-50,
meghri.syunig@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2018թվականի N 46-Ա

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման, հաշվի առնելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կոմիտեի հայտը (մուտք՝ 2018 թվականի հունվարի 23-ի N 260)

որոշում եմ՝

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին տալ «Մեղրի» պետական սահմանի անցակետի արդիականացման և վերակառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվան ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԻՒԽԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ



2018թ. հունվարի 30
ք.Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ
 (մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐՄԱՔ)

N 02 29 հունվար 2018 թ.

Օբյեկտ **<<ՄԵՂՐԻ >> պետական սահմանի անցակետի արդիականացում և վերակառուցում, բացարձակ նիշի բարձրությունը կազմում է 534մ, պարագծի երկարությունը՝ 2,116մ**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն) (հակիրճ բնորոշումը, հզորությունը)

նախագծային փաստաթղթերի մշակման համար:

Բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի)

ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գյուղ Կարճևան, Մայրուղի -4**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ք. Երևան, Մ. Խ որենացու փող. թիվ 3,7**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմք **Հայտ 23 հունվար 2018թ. անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական, կառուցապատվող հողամասի հատակագիծը**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

երկու տարի

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով () նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է

Հայաստան – Իրան պետական սահման, Մեղրիի համայնքի վարչական տարածք, հատուկ նշանակության հողերի կատեգորիա

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

8,64 հա

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը

Կառուցված է գործող շենքեր և շինություններ, որոնք ենթակա են քանդման: Գործող հատվածում ռելիեֆը հարթ է, նոր հատկացվող մասում ռելիեֆը ունի թերություն. կանաչապատված է: Նախագծող շենքերի և շինությունների օգտագործման և նպատակային

նշանակությունը չի փոխվում: Տարածքն ենթակա է բարեկարգման, կանաչապատման, ասֆալտապատման:
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Մ2 միջպետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհ:

(Ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

Նախատեսվում է նոր ջրամատակարարման, ջրահեռացման, հակահրդեհային, կոյուղու, տաք ջրի մատակարարման, գազամատակարարման, օդորակման, օդափոխության, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր, մաքրման կայան, նոր ենթակայանի կառուցման:

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Համայնքային և պետական նշանակության հողամասեր, շինություններ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

___ Օբյեկտի տարածքում կամ դրան մոտ գտնվող բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Օբյեկտը գտնվում է գործող <<Մեդրի >> պետական սահմանի անցման կետի տեղում: _____
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

___ Ապահովել ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները _____
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիսուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

___ Նախագիծը մշակել հաստատված տեխնիկական առաջադրանքի, ՀՀ օրենսդրության և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահանջներին համապատասխան: _____
(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ձևակառուցման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Համաձայն ՀՀ օրենսդրության և գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Համաձայն ՀՀ օրենսդրության և գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

16մ, 1-3 հարկ վերգետնյա, սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II- 6.02.2006 <<Մեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր>> շինարարական նորմերով սահմանված պահանջներին ապահովում

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

Կառույցի, կառույցների ընդհանուր հարաբերությունը հողամասի մակերեսին, առավելագույնը՝ 0,25

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

Կառույցներով զբաղված առավելագույն մակերեսը՝ 25% անջրանցիկ /ճանապարհներ, կայանատեղեր, հարկեր/ տարածքներ 60%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

8-10%, ազատ տարածքներ՝ 5-8%

9.7. այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդումը կատարել ըստ համապատասխան նախագծի և ժամանակացույցի

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Աշխատանքային փաստաթղթերին համապատասխան

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Նախագծի ինժեներական մասը մշակել համաձայն իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանների /կցվում են/ այդ թվում

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է Նախատեսել ջրամբարի կառուցում ջրերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան

Կոյուղի ջրափողրակներ տեղային համակարգի կառուցում պատվիրատուի պահանջների ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան

Տաք ջրամատակարարում տեղային համակարգի կառուցում պատվիրատուի պահանջների ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է Էլեկտրամատակարարում՝ էլեկտրականության ցանցին միանալու տեխնիկական պայմանները՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված պայմաններին համապատասխան

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է Գազամատակարարում՝ առկա է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է հեռահաղորդակցման ընկերությանների կողմից տրված պայմաններին համապատասխան

(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

Կազմակերպել՝ պահպանելով սանիտարական նորմերը նախատեսել տարածքներ կոնտեյներների համար

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Աշխատանքների փաստաթղթերի կազմում, մշակել ուղղաձիք հատակագծման, հեղեղաջրերի հեռացման և շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Աշխատանքների փաստաթղթերի կազմում, մշակում, մշակել տարածքի բարեկարգման, կանաչապատման, ցանկապատման նախագիծ

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ծներ, ցանկապատում, զովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Քար, երկաթբետոն, ապակի, մետաղ, էկոլոգիապես անվտանգ շին. այլ նյութեր
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Նախատեսել նորմատիվա-տեխնիկական պահանջներին համապատասխան
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Նախատեսել նորմատիվա-տեխնիկական պահանջներին համապատասխան

19. Շրջակա միջավայրի պահպանում

Իրականացնել շրջակա միջավայրի ազդեցության գնահատում, նախագծային փաստաթղթեր ներկայացնել, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Շինարարության ընթացքում առաջացած աղբի հեռացման ինտրի կարգավորման համար պայմանագիր կնքել ՏԲՄ-ի հետ
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

երկու տարի, աշխատանքային
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Նախագիծը ենթակա է քաղաքաշինական համալիր փորձաքննության՝ ՀՀ կառավարության 2010 մայիսի 6-ի 711-Ն որոշմամբ
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

<< Նախագիծ >> փուլը համաձայնեցնել պատվիրատուի հետ
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էքզիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ օրենսդրության համապատասխան
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

ՀՀ Ազգային անվտանգության ծառայության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, մաքսային կոմիտեի, մատակարար կազմակերպությունների

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում
27. Այլ պայմաններ

Նախագիծը ներկայացնել 5 օրինակից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵ ԿԱԿԱՐ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՄԻՍԻԹԱՆ ԶԱՔԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Զ. Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23,
+374 286 2-23-50, meghri.syuniq@mta.gov.am

N 312
05 մարտ 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՐՄԵՆ ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆԻՆ

Ձեր՝ N04/18-3/8233-18 20.02.2018թ.

Մուտք՝ N824 26.02.2018թ.

Հարգելի պարոն Սաքապետոյան

Տեղեկացվում է Ձեզ, որ 230 000 խմ 4-րդ կարգի բնահողի լիցքի անհրաժեշտության դեպքում այն կարող եք վերցնել Մեղրիի մաքսային կետից առավելագույնը 1 կմ հեռավորությամբ գտնվող տարածքից, 34 000 խմ բուսահողը կարող եք տեղափոխել Մեղրիի մաքսային կետից 1,4 կմ հեռավորությամբ գտնվող տարածք, իսկ 11 000 խմ շինարարական աղբը՝ 4 կմ հեռավորությամբ գտնվող Ագարակ քաղաքի աղբավայր:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ



Հ Հ Է Ե Բ Պ Ն Ջ Ի Ա Յ Ի Ն Տ Ն Տ Ե Ս ՈՒ Թ Յ Ա Ն Պ Ե Տ Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե Ի
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 733, ֆաքս՝ (374 10) 540 613
Էլ.փոստ՝ scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 733, fax: (374 10) 540 613
E-mail: scws@scws.am

<<____>> _____ 2018թ. N _____

Ձեր _____ 2018թ. N _____

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաքապետոյան

Ի պատասխան Ձեր 05.03.2018թ. N 04/18-3/10487-18 գրության՝ Մեղրիի մաքսային կետի ընդլայնվող տարածքում գտնվող ոռոգման պոմպակայանի և ջրագծի տեղափոխման ու մոնտաժման համար տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ հարցն ուսումնասիրվել է վերոնշյալ պոմպակայանը և ջրագիծը շահագործող <<Սյունիք>> ջրօգտագործողների ընկերության մասնագետների կողմից: Ընկերությունն առաջարկում է պոմպակայանը տեղափոխել մաքսատան մուտքից 100-200 մ դեպի արևելք, իսկ նոր ջրագիծը կառուցել մաքսատնից դեպքի Ագարակ տանող ճանապարհին զուգահեռ, այն միացնելով այդ պոմպակայանի սպասարկման տարածքի ներկայիս գործող համակարգին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով, որի ժամանակ առաջարկում եմ համագործակցել ջրօգտագործողների ընկերության համապատասխան մասնագետների հետ:

Հարգանքով՝

Վ. ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի միջև

Սույն համաձայնության հուշագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կոմբինատ) և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (այսուհետ՝ Մեղրի համայնք) միջև (այսուհետ՝ Կողմեր):

ՄԱԶԾ գրասենյակի կողմից՝ Եվրամիության ֆինանսավորմամբ և «Աջակցություն Հայաստանի միգրացիայի և սահմանային կառավարմանը» ծրագրի աջակցությամբ, իրականացվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուև-վարչության Մեղրիի մաքսային կետի արդիականացման և վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գործընթացը (այսուհետ՝ Ծրագիր):

Հաշվի առնելով, որ Ծրագրի շրջանակներում նախագծվող մաքսակետի տարածքն ընդլայնվում է՝ 2.4358 հա մակերեսով գոյություն ունեցող մաքսակետի հարավային սահմանագծից դեպի Արաքս գետը, և այդ տարածքում են գտնվում Կոմբինատի երեք խորքային հորերը, պոմպակայանը և դրանք սնուցող ենթակայանը՝ Կողմերը եկան համաձայնության հետևյալի շուրջ.

1. Կոմիտեն պարտավորվում է ապահովել Ծրագրի շրջանակներում նախագծում ներառված ընդլայնվող տարածքում գտնվող խորքային հորերի, պոմպակայանի և դրանք սնուցող ենթակայանի ապամոնտաժման և Կոմբինատի կողմից նախանշված նոր տարածքում (1.9355 հա) կառուցման աշխատանքների կատարումը՝ առաջնահերթության կարգով, պայմանով, որ նոր կառուցված խորքային հորերից ստացվող ջրի չափաքանակը առնվազն պետք է հավասար լինի այսօրվա քանակներին:

Կոմբինատի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով ընդլայնվող տարածքում խորքային հորերի, պոմպակայանի և էլ. ենթակայանի ապամոնտաժման աշխատանքները կատարել՝ նոր վայրում դրանց կառուցման աշխատանքներն ավարտելուց, շահագործման թույլտվության ձեռքբերման և հանձնման-ընդունման ակտով Կոմբինատին հանձնելուց հետո:

2. Կոմբինատը և Մեղրի համայնքը համաձայնվում են Ծրագրով նախատեսված ընդլայնվող տարածքում գտնվող Կոմբինատին սեփականության իրավունքով տարածքները փոխանակել Մեղրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1.9355 հա խորքային հորերը պոմպակայանի և էլեկտրական ենթակայանի կառուցման համար նախատեսված տարածքի հետ, պայմանով, որ սույն հուշագրի 4-

րդ կետում նշված ժամկետի խախտման /ձգձգման, ուշացման/ դեպքում տարածքների փոխանակության պայմանագիրը Կոմիտեի պահանջով միակողմանիորեն ենթակա է լուծման՝ անկախ այդ ժամկետների խախտման պատճառներից:

3. Կոմիտեն և Մեդրի համայնքը համաձայնվում են Ծրագրով նախատեսված ընդլայնվող 2.4358 հա տարածքը սահմանված կարգով օտարել Կոմիտեին:

4. ՀՀ կառավարությունը նախատեսում է 2019 թվականից սկսել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուն-վարչության Մեդրիի մաքսային կետի արդիականացման և վերակառուցման ծրագիրը, որի իրականացման ժամկետ է սահմանված 2 տարի:

5. Ծրագրի չիրականացման դեպքում սույն համաձայնագրից բխող գործողությունների արդյունքում ձեռք բերված իրավունք հաստատող փաստաթղթերը համարվում են ուժը կորցրած և գործում են գույքի նկատմամբ նախկին իրավունքները:

6. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:


- Համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված գործողություններն ավարտել Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում.

- Համաձայնագրի 3-րդ կետով նախատեսված գործողություններն ավարտել Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում:


ՀՀ պետական
եկամուտների կոմիտեի
գլխավոր քարտուղար

ՀՀ Սյունիքի մարզի Մեդրի
համայնքի ղեկավար


«Ագարակի
պղնձամոլիբդենային
կոմբինատ» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն


Վ. Գևորգյան

Վ.Տ.


Մ. Զարյան

Վ.Տ.


Ա. Մինյակով

Վ.Տ.



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 28

Ձեռնարկողը՝

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուշնա>> ՍՊԸ
Ք. Երևան, Վ. Մարզայան 26/3

Գործունեությունը՝

**Մեղրի անցակետի արդիականացման աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայր**
ՀՀ Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈՆԷԻ
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 28

<12> 04 2018թ.

**Մեղրի անցակետի արդիականացման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ << ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոյուշնս >> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ << Սյունիքի մարզ, Մեղրի համայնք

<< Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրիի մաքսային կետի արդիականացման և վերակառուցման ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգողը և Ծրագրի հիմնական շահառուն << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) է: Նախատեսվող գործունեության նպատակն է՝ Մեղրի սահմանային անցակետի ենթակառուցվածքների արդիականացման և ժամանակակից սարքավորումներով համալրման միջոցով բարձրացնել անցակետի անվտանգության մակարդակը, ավելացնել տրանսպորտային միջոցների և ուղևորների թողունակությունը, իջեցնել ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությունը և այլն: Արդիականացված անցակետում ներդրվելու է նաև «մեկ պատուհան» համակարգը, ինչի արդյունքում բեռնափոխադրողները և սահմանային անցակետը հատողները կշփվեն մեկ մարմնի հետ:

Մեղրու սահմանային անցակետը գտնվում է Երևանից մոտ 400 կմ հեռավորության վրա, Երևան-Իրան Մ-2 մայրուղու վերջնահատվածում՝ Ագարակ բնակավայրից մոտ 1000 մ, իսկ Իրանի Հանրապետության մոտակա բնակավայրից մոտ 1400 մ հեռավորության վրա: Նախատեսվող գործունեության տարածքը սահմանափակված է Մեղրի համայնքի վարչական սահմաններում, Ագարակ բնակավայրի հարավային մասում: Այն տեղակայված է Արաքս գետի հյուսիսային ափին՝ ծովի մակերևույթից 534 մ բարձրության վրա, "Արևիկ" ազգային պարկից մոտ 5 կմ հեռավորության վրա:



Գործող անցակետի տեղանքը իրենից ներկայացնում է հիմնականում հարթ ասֆալտապատ տարածք:

Համաձայն նախագծի Մեղրի արդիականացված անցակետի տարածքը կազմելու է 8.6 հա, որից մոտ 6.3 հա-ը գործող անցակետի տարածքն է, իսկ 2.3 հա լրացուցիչ ձեռք է բերվելու Մեղրու համայնքապետարանից: Ձեռք բերումից հետո հողատարածքի կատեգորիան (նշանակությունը) պետք է փոխվի հատուկ նշանակության: Մեղրու սահմանային անցակետի գլխավոր հատակագծի վերակառուցման լուծումները թույլ կտան ավելացնել տրանսպորտային միջոցների և ուղևորների թողունակությունը մինչև օրական՝

- 900 միավոր մեքենա,
- 2000 ուղևոր ավտոբուսներով և 500 ուղևոր տերմինալում:

Անցակետն իր մեջ ներառում է բոլոր ֆունկցիոնալ գոտիները, վարչական և տեխնոլոգիական շենք /շինություններ և ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, բեռների, ապրանքների, կենդանիների ստուգման և ձևակերպումների համար: Շինությունների և ենթակառուցվածքների մեծ մասը ներկայումս գործում են, սակայն, ենթակա են վերակառուցման՝ ժամանակակից պահանջներին բավարարելու համար: Աշխատանքային նախագծով Մեղրու սահմանային անցակետի տարածքում նախատեսված են քանդման և ապամոնտաժման աշխատանքներ /որոնք ներառում են՝ մոտ 1400 քմ վարչական շենք, 5000 քմ պարիսպ, պոմպակայան և օժանդակ շինություններ/: Նախագծով նախատեսված աշխատանքների հողային ծավալներ են՝ հանույթ (հողի բերրի շերտ)՝ 30,000 մ³, լիցք (գրունտ)՝ 400,000 մ³: Իսկ բարեկարգման աշխատանքները ներառում են՝

- Ասֆալտ բետոնե պատվածք՝ 67,065 մ²
- Սիզամարգ՝ 2,379 մ²
- Մայթ՝ 8,632 մ²
- Եզրաքար՝ 4,205 գծ.մ:

Որպեսզի նոր նախագծված հատվածը պիտանի լինի շահագործման համար, դեպի Արաքս գետ իրականացնվելու է մոտ՝ 230,000 մ² ծավալով 4-րդ կարգի բնահողի լիցք (նախապես հանելով բուսահողի շերտը), որի կայունությունը ապահովելու նպատակով նախատեսվում է կառուցել՝ 3-7 մ բարձրությամբ (կախված տեղանքից) և մոտ 650 մ երկարությամբ երկաթ-բետոնյա հենապատ՝ Արաքս գետի հունով: Լիցքի համար 4-րդ կարգի բնահողը հատկացվելու է Մեղրիի համայնքապետարանի կողմից (Մեղրի համայնքի ղեկավարի 2018թ.-ի մարտի 5-ի թիվ 312 գրության համաձայն):

Մեղրու սահմանային անցակետի գլխավոր վարչական շենքի առաջին հարկում նախատեսված են սպասարկման սրահներ: Երկրորդ հարկում նախատեսված են օժանդակ, պահեստային տարածքներ, սերվեր, տղամարդկանց և կանանց հանդերձարաններ: Բոլոր սենյակները ապահովված են օդափոխության, օդորակման և էլեկտրասնուցման համակարգերով:

Անասնաբուժական, սանիտարական և ֆիտոսանիտարական միջուկման մասնաշենքում նախատեսվում է իրականացնել կենդանիների և բուսական ծագման բեռների խորացված ստուգում, որն իր մեջ ներառում է կենդանիների ստուգում,



լաբորատոր հետազոտությունների իրականացում, համապատասխան ջերմային ռեժիմով սենքերում բեռնավորված ապրանքի պահպանում:

Տրանսպորտային միջոցների և բեռների մանրակրկիտ ստուգման համար նախատեսված է կառուցել 2 առանձին՝ համապատասխան սարքավորումներով զինված և տեխնոլոգիական բոլոր պահանջներին համապատասխան մասնաշենքեր: Այստեղ իրականացվելու են մարդատար և բեռնատար ավտոմեքենաների բեռների մանրակրկիտ ստուգում, բեռնաթափում, առգրավված բեռների ժամանակավոր պահպանում՝ համաձայն մաքսային կանոնակարգի:

Նախատեսվում է նաև տրանսպորտային միջոցների ռենտգենային ճառագայթներով զննման մասնաշենք, որտեղ իրականացվելու է ռենտգեն սարքի (սկաների) միջոցով տրանսպորտային միջոցների և բեռների զննում:

Ծառայողական մասնաշենքում անձնակազմի համար նախատեսված են աշխատասենյակ, հանգստի սենյակ, սանհանգույց, հանդերձարան և ցնցուղարան, խոհանոց (որը մաժամանակ ծառայում է նաև շների կերի պատրաստման համար):

Հայաստանից դեպի Իրան՝ ելքի մոտ գոյություն ունեցող ճանապարհի յուրաքանչյուր կողմի լայնությունը ավելացվելու է մինչև 5.5 մ՝ գոյություն ունեցող կամուրջի չափերի (2 x 5.5 մ երթևեկելի մաս և 2 x 1.5 մ մայթեր) հետ համահունչ լինելու համար:


Նախագծով նախատեսվում է մարդատար մեքենաների համար կառուցել 3 երթևեկելի գոտիներ՝ յուրաքանչյուրը 4 մ լայնությամբ և միմյանցից տարանջատել 4 մ լայնությամբ մայթ/բաժանիչ գոտիով և 2 երթևեկելի գոտիներ բեռնատարների և արտագաբարիտային բեռնատարների համար, համապատասխանաբար 4 մ և 5.5 մ լայնությամբ:

Մեղրու անցակետի խմելու ջրի մատակարարումը ներկայումս իրականացվում է արտեզիան հորից՝ մոտ 30 մ խորությունից և 75 մմ տրամագծով քաղաքային ջրագծից: Ջրամատակարարումը ավելի հուսալի դարձնելու նպատակով, աշխատանքային նախագծով նախատեսվում է նույն խորությամբ ևս մեկ արտեզիան հորի հորատում: Հորի ջուրը համապատասխանում է խմելու ջրին ներկայացվող պահանջներին, պահանջվում է միայն ջրի վարակազերծում քլորով: Քլորակայանը նախատեսվում է իրականացնել համակցված պոմպակայանի հետ առանձին մուտքով:

Տաք ջրամատակարարումը և ջեռուցումն իրականացվելու է գործող գազամատակարարման համակարգով՝ կաթսայատան միջոցով, ինչպես նաև էլեկտրական կոնվեկտորներով:

Անցակետի տարածքի հրդեհամարման համար նախատեսված է արտաքին հրդեհաշիջման համակարգ: Համակարգի սնման աղբյուր է հանդիսանում արտեզյան հորը (հորերը) և գործող ջրագիծը:

Տարածքի կանաչապատ տարածքների, ծառերի ու սիզամարգերի ջրումն իրականացվում է ոռոգման համակարգի միջոցով: Որպես ոռոգման ջրաղբյուր ծառայում է արտեզյան հորը, որտեղից մինչև քլորացումը լցվում ոռոգման ջրամբար, այնուհետև պոմպերով մղվում է ոռոգման ցանց: Կոյուղու բակային ցանցը հնքնառն է: Կեղտաջրերը հավաքվելով մասնաշենքերի կոյուղու թողարկներից ուղղվելու են տեղանքի ցածրադիր մասում նախագծով նախատեսված կենցաղային կեղտաջրի մաքրման կայան՝ 15.0 մ³/օր



արտադրողականությամբ, որտեղ կատարվում է եռաստիճան մաքրում և լրիվ կենսաբանական մաքրումից հետո մաքրված ջրերը ուղղվում են գետ, կամ օգտագործվում ոռոգման նպատակով:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նաև անձրևաջրերի կոյուղու համակարգ, որտեղից ջուրը նույնպես ուղղվելու է մաքրման կայան և մաքրումից հետո օգտագործվելու ոռոգման նպատակով:

Անցակետի գործունեության ընթացքում առաջացած կենցաղային աղբը տեղադրվելու է անցակետից մոտ 4 կմ հեռավորության վրա գտնվող Ագարակի աղբավայրում: Իսկ քանդման աշխատանքներից, ինչպես նաև շինարարական աշխատանքներից առաջացած նյութերը, կամ շինաղբը կհեռացվեն, կամ կտեղադրվեն Մեղրի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված:

Ճանապարհների ծանրաբեռվածության տեսանկյունից շինարարական աշխատանքների ազդեցությունը բացասական է, սակայն կարճաժամկետ և կարող է մեղմացվել հայտում ներկայացված միջոցառումների իրականացմամբ:

Ներկայումս անցակետի գործունեությունից վնասակար նյութերի արտանետումների հիմնական աղբյուրներն են՝ սահմանը հատող տրանսպորտային միջոցները, իսկ արտանետումների բաղադրիչներն են՝ ածխածնի օքսիդը, ազոտի օքսիդները, ծծմբի անհիդրիդը, ածխաջրածինները, պինդ մասնիկները: Շինարարական աշխատանքների ժամանակ կավելանան նաև փոշու արտանետումները, որոնք նախատեսված մեծածավալ հողային և շինարարական աշխատանքների արդյունք են: Նշված արտանետումները կարելի է նվազեցնել համապատասխան մեղմացնող միջոցառումների միջոցով՝

- Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար տեխնիկանում անցնող բեռնատար մեքենաներ,

- Սորուն նյութեր տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքը պահել ծածկված վիճակում,

- Սորուն նյութերը շինհրապարակում պահել ծածկված անջրաթափանց թաղանթով,

- Շինհրապարակը, հատկապես հողային աշխատանքների ժամանակ, պարբերաբար ենթարկել ջրցանի,

- Շին.հրապարակ բեռնատար մեքենաների մուտքի և ելքի ժամանակ անիվների ջրում,

- Արգելել շինհրապարակում շինարարական նյութերի և թափոնների այրումը:

Հնարավոր է աղմուկի մակարդակի որոշակի բարձրացում անցակետի արդիականացման և հատկապես հողային և շինարարական աշխատանքների ընթացքում Մ-2 ավտոմայրուղու երկայնքով՝ Մեղրի-Ագարակ հատվածում, որի նվազեցման համար ևս նախատեսվել են միջոցառումներ:

Արաքս գետի հունով համապատասխան հենապատի կառուցման աշխատանքներին կնախորդեն վերոնշյալ տարածքից մոտ 34,000 մ³ ծավալով բուսահողի շերտի հեռացումը և ժամանակավորապես պահումը՝ Մեղրի համայնքի ղեկավարի կողմից հատկացված վայրում, որը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքից 1.4 կմ հեռավորության վրա: Հենապատի համար որպես լիցքի գրունտ



նախատեսվում է օգտագործել Մեդրիի մաքսային կետի տարածքի հարթեցման արդյունքում առաջացած բնահողը, որը տեղադրված է 1 կմ հեռավորության վրա: Նշված աշխատանքները կիրականացվեն Մեդրի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված:

Անցակետի արդիականացման նախագծի շրջանակներում ձեռք բերվող հողակտորում (Արաքս գետի ափին) գտնվում է «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ արտադրական ջրամատակարարման մոտ 80%-ը և Կարճևան գյուղի ոռոգման ջրամատակարարումն ապահովող պոմպակայանները: ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից տրված գրության համաձայն ուսումնասիրվել է հարցը «Սյունիք» ՋՕԸ մասնագետների կողմից և առաջարկվել են համապատասխան լուծումներ: Կոմբինատի ջրամատակարարման կարիքները բավարարելու նպատակով տրվել է համաձայնություն՝ տեղափոխման աշխատանքների համար: Կոմբինատի համար անհրաժեշտ ջրաքանակ ապահովելու նպատակով տարածքում նախատեսվում է կատարել հիդրոերկրաբանական հետազոտություններ /առաջարկվել է տարածքի կոորդինատները և աշխարհագրական դիրքը/: Բոլոր ենթակառուցվածքների, կառուցման, ապամոնիտաժման և մոնիտաժման աշխատանքները ֆինանսավորվելու են նախագծի բյուջեից:

Անցակետի արդիականացման աշխատանքների ընթացքում «Ալլեգոա տրանս» ՍՊԸ-ի կողմից վարձակալված տարածքից 85 բարդու և 41 պտղատու ծառեր նախատեսվում է արմատներով հանել և հետագայում օգտագործել տարածքի բարեկարգման նպատակով:

Տարածաշրջանում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակների պահպանումն ապահովելու նպատակով նախատեսված է մինչև հողային աշխատանքների մեկնարկը հրավիրել մասնագիտացված ընկերություն կամ մասնագետի, որը կգույքագրի վտանգված բուսատեսակները և շրջակայքում կորոշի այն գոտիները, որոնք իրենց կլիմայական պայմաններով և հողածածկույթով նպաստավոր են այդ տեսակների վերատնկման կամ վերաբնակեցման համար:

Հայտում նախատեսվել են նաև միջոցառումներ արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազագույնի հասցնելուն և արդյունավետ հակազդելուն: Շրջակա միջավայրի վրա և սոցիալական բնույթի ակնկալվող ռիսկերը/ազդեցությունները և դրանք նվազեցնող և կանխարգելող միջոցառումները ամփոփվել են հայտում ներկայացված բնապահպանական և սոցիալական միջոցառումների ծրագրում:

Մեդրու անցման կետը ՀՀ և Իրանի Իսլամական Հանրապետության միջև գործող միակ սահմանային անցակետն է, այն կարևորագույն նշանակություն ունի երկու երկրների միջև տնտեսական համագործակցության, բեռնա և ուղևորափոխադրումների ապահովման տեսանկյունից: Այդ իսկ պատճառով անցակետի արդիականացման նախագիծը խիստ կարևորություն ունի Հանրապետության և հատկապես Սյունիքի մարզի համար: Ազդակիր համայնքի զարգացման տեսանկյունից նախատեսվող գործունեության իրականացումը կնպաստի Մեդրու տարածաշրջանում զբոսաշրջության և հարակից ճյուղերի զարգացմանը: Նախագծի իրականացումը համահունչ է Մեդրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրի դրույթներին: Նախագիծը կարևոր է նաև նոր աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից:



Փորձաքննական պահանջներ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (ներառյալ ջրօգտագործումը, ջրահեռացումը, հողերի գործառնական նշանակության փոփոխությունը և այլն):

2. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ԲՀՊՏ-ների մասին ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ 29.01.2010թ. ՀՀՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>> N71-Ն և N72-Ն և 31.07.2014թ. N781-Ն որոշումների պահանջներով:

3. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ազդակիր համայնքի ղեկավարից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական հրապարակների տեղադրման, բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ:

4. Հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բուսական և կենդանական տեսակների պահպանության միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անցակետի շահագործման փուլում անհրաժեշտ է ապահովել մաքրման կայանի անխափան աշխատանք, մաքրման կայանից հեռացվող հոսքաջրերում պահպանելով հետևյալ ցուցանիշները՝ ԹԿՊ՝ 10-20 մգ/լ սահմաններում, ԹԲՊ՝ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակություն՝ 15-20 մգ/լ:

6. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնս» ՍՊԸ կողմից ներկայացված Մեղրի անցակետի արդիականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Հ. Մկրտչյան

«Հաստատում եմ»
ՀՀ ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվան
Բուսաբանության ինստիտուտի տնօրեն,
թղթ. անդամ, կենս. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր



Հաշվետվություն

*Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության սահմանին
Սյունիքի մարզի Ագարակ գյուղի շրջակայքում գտնվող «Մեղրի» պետական սահմանային
անցակետի արդիկանացման ծրագրով նախատեսված ընդլայնվող տարածքի
բուսաբանական ուսումնասիրության վերաբերյալ*

Երևան, 2018

Հաշվետվություն

Ուսումնասիրությունը կատարվել է 2018 թվականի օգոստոսի 2-ին:

Ուսումնասիրված տարածքը բաղկացած է 2 մասից՝ հատված, որը արդեն իսկ զբաղեցված է գործող մաքսային տերմինալով և սահմանային հսկողության կետով՝ իր համապատասխան ենթակառուցվածքների հետ միասին և Արաքս գետի ձախակողմյան ափի երկայնքով բնական բուսականությամբ ծածկված հատված:

1. Ներկայումս օգտագոծված տարածքը հետաքրքրություն և արժեք չի ներկայացնում բուսաբանական տեսանկյունից: Տարածքի մեծ մասը ասֆալտապատ է, իսկ ոչ մեծաքանակ կանաչ տնկարկները ներկայացված են առավել լայն տարածում ունեցող արորիզեն և ներմուծված այնպսիսի տեսակներով ինչպիսին են՝ սպիտակ բարդին, թթենին, կամպսիսը, խաղողը և այլն:

2. Արաքս գետի երկայնքով հանդիպում է ընդամենը 1 էկոհամակարգ, որը համարվում է հազվագյուտ Հայաստանի համար՝ G1.372-AM – ավիամերձ անտառներ *Populus euphratica* (եփրատյան բարդի) տեսակի գերակշռությամբ (Նկ. 1): Այս էկոհամակարգը համարվում է շատ հազվագյուտ, հայտնի է նրա տարածման միայն 2 լոկալիտետ՝ մեկը Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանում, Արաքս գետի ավիամերձ հատվածում, որն էլ համընկնում է ուսումնասիրվող տարածքի հետ: Բացի այդ, որպես այս էկոհամակարգի երկրորդ լոկալիտետ շատ փոքր հատված (1 հա պակաս), հայտնի է Ուրցի լեռնաշղթայի նախալեռնային գոտում՝ Արարատի մարզի տարածքում: Ըստ մեր գնահատման ուսումնասիրվող տարածքում այս էկոհամակարգի վիճակը կարելի է համարել բավարար, չնայած որ այն որոշակիորեն խախտված է մարդու գործունեության արդյունքում: Մասնավորապես, այստեղ տեղադրված է պոմպակայան, կառուցված է քարե պաշտպանիչ պատ, կան արահետներ և գրունտային ճանապարհ: Պաշտպանիչ պատի կառուցումը, ամենայն հավանականությամբ, փոխել է տարածքի ջրային հավասարակշռությունը, քանի որ եփրատյան բարդու առանձնյակների մեծ մասը չորանում են (տես ստորև):

Այս էկոհամակարգի էդիֆիակատորը եփրատյան բարդին (*Populus euphratica*) է (Նկ. 2): Այս տեսակը ունի հարաբերականորեն լայն տարածում Հին Միջերկրածովային շրջանի արևելյան հատվածում, սակայն հազվագյուտ է Հայաստանի համար: Համաձայն 2010 թ. հունվարի N 72-Ն ՀՀ կառավարության որոշման այս տեսակը չի ընդգրկվել ՀՀ Բույսերի Կարմիր գրքում, սակայն ներկայացված է հավելված 1-ում՝ “Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող” (NT) կատեգորիային պատկանող տեսակների ցանկ (“ՀՀ կառավարության 29.01.10 թ. N 72-Ն որոշման մեջ չընդգրկված տեղեկատվական նյութեր”): Պետք է նշել, որ ուսումնասիրված տարածքում աճում է եփրատյան բարդու տարբեր տարիքային խմբերի պատկանող ավելի քան 500 առանձնյակ (10-12 մ բարձրության հասուն ծառերից (150 առանձնյակ) սկսած մինչև բազմաթիվ 1-2 տարեկան (մատղաշ), սակայն հասուն ծառերի շուրջ 30%-ը գտնվում են չորացման տարբեր փուլերում (Նկ. 3, 4): Հատկապես սա վերաբերում է գետի ափից պաշտպանիչ պատով բաժանված հատվածում հանդիպող առանձնյակներին: Հավանաբար, այս պատը խախտել է դրանց ջրամատակարարումը: Բացի այդ, հասուն ծառերի մեծամասնության ճյուղերի վրա զարգանում են բազմաթիվ ախտաբանական գոյացություններ (Նկ. 5):

Բացի եփրատյան բարդի տեսակից ուսումնասիրված տարածքում ծառաբույսերից աճում են՝

Tamarix ramosissima – կարմրան ճյուղարատ,

Tamarix hohenackeri – կարմրան հոհենակերի (Նկ. 6),

Salix excels – ուռենի բարձր,

Morus alba – թթենի սպիտակ

Խոտածածկում ներկայացված են ինչպես վերը նշված էկոհամակարգին բնորոշ տեսակներ, այնպես էլ բազմաթիվ ռուդերալ տեսակներ, ինչպիսիք են.

Phragmites australis – եղեգ հարավային,

Zygophyllum fabago – զուգատերև սովորական,

Alhagi pseudalhagi – ուղտափուշ սովորական,

Glycyrrhiza glabra – մատուտակ մերկ,

Suaeda altissima – սուվեղ բարձր,

Cynanchum acutum – շնախոտ սուր,

Lactuca serriola – կաթնուկ կողմնացույց,

Polygonum paronychioides – մատիտեղ քցմածաղիկ,

Lepidium ruderales – աղբակոտեն գարշահոտ,
Xanthium italicum – դառնուկ իտալական,
Plantago lanceolata – եզան լեզու նշտարատերև,
Calamagrostis pseudophragmites – եղեգնախոտ կեղծ եղեգային,
Setaria viridis – խոզանուկ կանաչ,
Tribulus terrestris – տատաշ փովոդ,
Avena fatua – վարսակ պոչուկ,
Halimone verrucifera – հալիմոնե գորտնուկավոր,
Rubia tinctorum – տորոն ներկատու,
Convolvulus arvensis – պատատուկ դաշտային,
Melilotus albus – իշառվույտ սպիտակ,
Malcolmia africana – մակուլմիա աֆրիկական,
Calystegia sepium – տիպատատուկ ցանկապատային,
Conyza canadensis – կոնիզա կանադական,
Artemisia fragrans – օշինդր բուրավետ,
Cnicus benedictus – լայնատերևուկ օրհնված,
Achillea millefolium – հազարատերևուկ սովորական,
Carthamus oxyacanthus – կանճրակ սրափուշ,
Salsola nitraria – օշան նատրիումային

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրված տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Բույսերի Կարմիր գրքում (2010) գրանցված բուսատեսակներ: Այսինքն իրավական տեսանկյունից ուսումնասիրված տարածքի օգտագործման դեմ առարկություն չկա: Սակայն, հաշվի առնելով այստեղ ներկայացված էկոհամակարգի հազվագյուտ լինելը և այդ էկոհամակարգի էդիֆիկատոր տեսակի (եփրատյան բարդի) սահմանափակ ներկայացվածությունը հանրապետության տարածքում, մենք խորհուրդ ենք տալիս այս տարածքի օգտագործումից առաջ այս տարածքի մոտակայքում ստեղծել տնկարան, որտեղ կտրոնավորման եղանակով հնարավոր կլինի բազմացնել եփրատյան բարդու լավ առանձնյակները և հետագայում համալրել այս էկոհամակարգը նոր բույսերով՝ Մեդրիի տարածաշրջանում, Արաքս գետի երկայնքով:

Տեղեկատվության համար. համաձայն ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենքի՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, մշակութային մեջ ներդրման և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով, բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի թույլտվությամբ (հոդված 24): Միաժամանակ, 17-րդ հոդվածի գ/ ենթակետի համաձայն բուսական աշխարհի հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող օբյեկտների պահպանության նպատակով մշակվում և ներդրվում են հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բուսական տեսակների և դրանց համակեցությունների վերականգնման կենսաբանական տեխնոլոգիաները:

ՀՀ ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի երկրաբուսաբանության բաժնի վարիչ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝



Գ.Մ. Ֆայվուշ

ՀՀ ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի կարգաբանության և բարձակարգ բույսերի աշխարհագրության բաժնի վարիչ, կենս. գիտ. դոկտոր՝




Մ. Է. Հովհաննիսյան

14.08.2018

Հավելված



Նկ. 1. Էկոհամակարգ՝ G1.372-AM



Նկ. 2. Եփրատյան բարդի



Նկ. 3. Բարդի եփրատի չորացման առաջի փուլում



Նկ. 4. Չորացած բարդի եփրատի



Նկ. 5. Գալերը եփրատյան բարդի վրա



Նկ. 6. Կարմրան Հոհենակերի